



ՄԻՈՆ, ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ



Է. ՏԱՐԻ—ՆՈՐ ՇՐՁԱՆ

1933-ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԹԻԻ 10



ԽՈՐԷՆ Ա.
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄ. ՀԱՅՈՑ
ՌԵԶՍ. 1932

ԽՈՐԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱ-ԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՄԱԶԳԻՅԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ

Շնորհազարդ Տ. ՍԱՀԱԿ Բ. և Աթուակից Տ. ԲԱԲԿԷՆ Ա. կաթողիկոսաց Տանն Կիլիկիոյ, Ամենապատիւ Պատրիարքի Առաքելական Աթուոյն Ս. Յակոբեանց Երուսաղէմի Տ. ԹՈՐԴՈՄ Արքեպիսկոպոսի, Ամենապատիւ Պատրիարքի Հայոց Կ. Պոլսոյ Տ. ՄԵՍՐՈՊ Արքեպիսկոպոսի, Դերասպատիւ առաջնորդաց համօրէն թեմօրէից Մերոց, արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից և ամենայն պաշտօնէից Ս. Եկեղեցւոյս, Բնդհանուր Բարեգործական Միութեան և ամենայն ազգային աստուածահաճոյ հաստատութեանց և վարչութեանց նոցին և համօրէն հաւատացեալ հօտին Հայաստանեայց Եկեղեցւոյ, որ ի Հայաստան աշխարհի, ի Հանրապետութիւնս Խորհրդային Միութեան և յամենայն պետութիւնս ի սփիւռս աշխարհի, ողջոյն Հայրապետական և օրհնութիւն ի Միաձնաէջ Տաճարէս Ս. Էջմիածնի:

Ապաքէն յայտ է ամենեցուն եղբարց Մերոց սիրելեաց և հոգեւոր որդւոց ընտրութիւն Մեր յԱթու կաթողիկոսութեան Ամենայն Հայոց՝ ի ձեռն Համազ-

դային-եկեղեցական ժողովոյ, դումարելոյ ի տասնէն ցտասնեքեքն նոյեմբերի 1932 ամի: Յուշ ածեալ զպատմութիւն ժողովոց և զընտրութիւնս կաթողիկոսաց մերոց, կոչեմք զսա եզական՝ ոչ միայն ազատ զործառնութեամբ իւրով, առանց արտաքին ներգործութեանց և թելադրութեանց ի վնիւս, այլ և նորոգութեամբ հնաւանդ սովորութեանն՝ ըստ ոգւոյ Մերս եկեղեցւոյ, որ հայի յընտրութիւն միոյ և եթ թեկնածուի կաթողիկոսի և յօծումն նորա անմիջական, առանց միջամտութեան կամ հաստատութեան մարմնաւոր իշխանութեանն: Ընտրութիւն Մեր կատարեցաւ յերկոտասաներորդ աւուր նոյեմբերի, իսկ զհայրապետական օծումն ընկալաք զկնի աւուր միոյ, ըստ միահամուռ ցանկութեան ամենայն ժողովականաց:

Ձայս ամենայն և զյաջողութիւն ելից ժողովոյն պարտիմք բարեհաճութեան Խորհրդային Կառավարութեան Հայաստանի:

Յայտ առնելով զայսպիսի բարեբաւորիկ նշանաց սկզբնաւորութեան Մերոյս Հայրապետութեան, սակայն ոչ մոռանամ զմտաւ ածել զգիտարին հանդամանս ժամանակի և բերմանց, յորում վիճակեցաւ մեզ բազմիլ յԱթոռ առաքելաշնորհ Լուսաւորչին տանս Խորհրդմեան և սրբազան յաջորդաց նորին, կենդանի նահատակութեամբ և բազմեքախտ զործովք և արդեամբ որոց՝ յնթացս բազմահոլով դարուց, եհաս մեզ նաւ եկեղեցւոյ Մերոյ Սրբոյ անվտանգ յամենայն խութից և անփորձ ի փոթորկալից ալեաց: Յաջողեցի՞ք և Մեզ կատարել զնոյն պարտիս, զեղեալն ի վերայ Մեր թելադրութեամբն Աստուծոյ և ընտրութեամբ ժողովականաց համայն հաւատացեալ հօտին Հայաստանեայցս եկեղեցւոյ:

Ձի տեսանեմք զհաւատացեալ ժողովուրդն Մեր ցրուեալ ի սփիւռս աշխարհի, զրկեալ ի հայրենի տանէ և յընչից, թափառական յուրտոս օտար և հեռաւոր աշխարհաց, ծիւրեալ և պասքեալ յերեսաց աղքատութեան և պանդխտութեան, ենթակայ այլասերման, տատանեալ ի հաւատս և բեկեալ ի յուսոյ: Յաջողեցի՞ք և Մեզ միխթարել զսգաւորս, բժշկել զհոգւով հիւանդացեալս, կանգնել զզլորեալս և հաստատել ի հաւատ և ի յոյս, ժողովել ի մի զցրուեալսն ի հոգևոր հայրենիս, ի փարախ Լուսատուին Մերոյ Հայաստանեայց: Յաջողեցի՞ք Մեզ ի կատար ածել զորոշումն Համազգային-եկեղեցական ժողովոյն, կազմել զնոր սահմանադրութիւն, բղխեալ ի նուիրական և ի պատմական ականգութեանց եկեղեցւոյ Մերոյ, ի նկատ առեալ և զբազմատեսակ իրաւակարգ ժողովրդոց, յորոց միջի բնակեալ կան հատուածք հաւատացելոց Մերոց, բարեկարգել և նորոգել զհնացեալ սովորութիւնս և կարգս, որք կարօտին սրբազրութեան, ըստ պահանջից և կարեաց նորոյ ժամանակի ի սահմանս իմաստուն խոհականութեան և զգուշաւորութեան, բարւոքել զնիւթական ծանր վիճակ Աթոռոյս ի պահպանութիւն և ի յարատեւութիւն միաբանական ուխտիս և դաստիարակել զմանկունս եկեղեցւոյ ի սպասաւորութիւն և ի կենդանի քարոզութիւն Բանին կենաց: Յուսալ յուսամ միայն յողորմութիւն և յօգնականութիւն Աստուծոյ, եթէ հասանիցէ Մեզ ի թիկունս՝ առ ի զօրացուցանել զտկարութիւնս ի պահպանութիւն և ի կարգաւորութիւն լրութեան եկեղեցւոյ Մերոյ Սրբոյ:

Յուշ ածելով զգիտարութիւնս ժամանակիս և հանգամանաց, սակայն ոչ դանդաղիմ զոհանալ զԱստուծոյ, զի չեմ միայնակ ի կրել զծանր լուծ պարտա-

ւորութեանցս ի կառավարութեան սրբոյ եկեղեցւոյ և համօրէն հաւատացեալ հօտին, զի ունիմք ընդ Մեզ զՏէր ՍԱՀԱԿ Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ, զիմաստութեամբ ծերացեալ եղբայրն Մեր ընդ Աթոռակցաւ իւրով Տեառն ԲԱՐԳԷՆԻ, զՏէր ԹՈՐԳՈՄ Արքեպիսկոպոսն յաթոռ Պատրիարքութեան Ս. ՅԱԿՈԲԵԱՆՅ Երուսաղէմի, զՏէր ՄԵՍՐՈՊ Արքեպիսկոպոսն յաթոռ Պատրիարքութեան Կ. Պոլսոյ, այլ և առ Մեզ ունիմք զանդամս Գերագոյն Հոգեւոր Խորհրդոյ և զմիաբանական ուխտ Ս. Աթոռոյս, զամենայն Առաջնորդս թեմօրէից Մերոց, զազգային-եկեղեցական վարչութիւնս և զխորհուրդս, որք միացեալ ի սիրտ և ի հոգի սիրովն Քրիստոսի և եկեղեցւոյ Մերոյ, օգնական լիցին ի կատարման պարտեացս ի պահպանութիւն և ի պայծառութիւն Մօրս ընդհանրականի և հոգեւորի:

Արդ, առ Ձեզ են Բանք իմ, Շնորհազարդ Տ. ՍԱՀԱԿ Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ և Աթոռակից Տ. ԲԱՐԳԷՆ, ողջունեմ զՁեզ սիրով եղբայրութեան, որպէս զհոգեւոր և զսիրելի հարազատս Մեր. չեն ինչ թեթև և վիճակեալ Ձեզ պարտիք առ ի հովուել և ի մի ժողովել զհաւատացեալն ի Ձեզ հօտ, որ ի հետեւանս դժբաղդ բերմանց, զրկեալ ի հայրենի երկրէն, նուազեալ ի սրոյ, ի սովոյ եւ ի համաճարակ հիւանդութեանց, մնացորդիւք միայն մակաղեալ կայ ընդ հովանեաւ հոգեւոր տեսչութեան Ձերոյ, ընդ հիւրընկալ երկնի ազնիւ ժողովրդեանն Սուրբոյ: Հաճութեամբ տեղեակ եմք զբազմազան վաստակոց և աշխատանաց Ձերոց ի վերակազմութիւն կաթողիկոսարանիդ, ի բացումն դպրոցաց և աստուածահաճոյ հաստատութեանց առ Ձեզ և յամենայն քաղաքս և յաւանս, ուր բնակեալ և դադարեալ կան ազգայինք Մեր: Ուրախ եմք յոյժ ընդ վաստակ և ընդ յաջողութիւն Ձեր, զոր իմ իսկ սեպհական համարիմ:

Ողջունեմ և զՁեզ, եղբայր Մեր՝ Ամենապատիւ Տէր ԹՈՐԳՈՄ Պատրիարք Հայոց Երուսաղէմի՝ միաբանական ուխտիւդ. Աթոռ Պատրիարքութեանդ հանդերձ այլ սրբազան տեղեաւքդ պարծանք մեր են, Հայաստանեայցս եկեղեցւոյ և հօտի յաչս ընդհանուր քրիստոնէութեան, տեղիք սուրբ զարշապարաց և կենդանարար աւետարանական քարոզութեան Փրկչին մերոյ, ի պահպանութիւն և ի պայծառութիւն որոց տքնիք Դուք և միաբանական ուխտ Ս. Յակոբեանց: Հայցելով զինամս և զհովանաւորութիւն Աստուծոյ ի վերայ Ձեր և միաբանութեանդ, մաղթեմք և ցանկամք, զի Պատրիարքարանդ և վանք եղիցին ընդ կրօնականին և լուսատու ջան եկեղեցական-ազգային զիտութեանց, մշակութեան դպրութեան, արուեստի և պատմութեան ազգիս, շողկապ կենդանի ներկայիս ընդ անցելոյն, ժառանգաւոր դպրոցդ սերմնարան քրիստոնէական կենդանի քարոզութեան և տուն ճշմարիտ դաստիարակութեան և լուսաւոր պատրաստութեան ուխտի մանկանց և պաշտօնէութեան մերս եկեղեցւոյ: Ուրախ եմք հոգւով, զի ի ժամանակս նախորդիդ, հոգելոյս Տէր ԵՂԻՇԷԻ Պատրիարքի սկզբնաւորեալ, այժմ առաւել եռանդեամբ շարունակէք զգործ յառաջդիմութեան ժառանգաւորաց դպրոցիդ, զվերակազմութիւն տպարանիդ և հրատարակչական գործոյ, որպէս և նիւթական բարեկարգութեան վանուցդ:

Ողջունեմ և զՁեզ, եղբայր Մեր Տէր ՄԵՍՐՈՊ Արքեպիսկոպոս՝ Պատրիարք Հայոց Կ. Պոլսոյ, հանդերձ Եպիսկոպոսական և քահանայական դասիւդ և Ազգային-եկեղեցական վարչութեամբք: Եւ Դուք չէք ազատ ի վշտաց և ի նեղութեանց բերմամբ բարձր պաշտօնիդ: Մաղթեմք վասն ձեր ամենեցուն՝ զօ-

բանալ շնորհօք վերին տեսչութեան, որ ղեկավարն է բաղդի և կենաց ազգաց և ժողովրդոց, զի կարող լինիցիք տանել զուժ՝ եղեալն ի վերայ Ձեր, մխիթարել զժողովուրդն Մեր, որ ի Կ. Պոլիս և յամենայն զաւառս, պահպանելով որպէս զթանգազին մասն և ժառանգութիւն ընդհանրական Եկեղեցւոյս, հաստատելոյն ձեռամբ Լուսաւորչին Հայաստանեայց:

Ընդ հայրական ողջունիս յորդորեմ և զՁեզ, զամենայն Առաջնորդս թեմօրէից Մերոց, զգաստ եպիսկոպոսաց և վարդապետաց, որք ի Հայաստան աշխարհի, ի Խորհրդային Միութեան և յարտասահմանի, լինել զգաստ և աշակուրջ ի պաշտամանդ, ժիր ի քարոզութեան Բանին կենաց, օղակ կենդանի ընդ մէջ հաւատացեալ ժողովրդոց և Հայրապետական Աթոռոյ, զի ամենեքեան Դուք հոգեւոր որդիք էք Մեծի Տանս և անդամք միաբանական ուխտիս, որ ի Ս. Էջմիածին: Զգուշացուցանեմք մանաւանդ զԱռաջնորդս արտասահմանեան թեմօրէից, հեռի կալ և պահել զհաւատացեալ Ձեր ժողովուրդ ի կուսակցական պայքարաց և յանախորժութեանց, հայելով միայն ի բարոյական և ի կրօնական շինութիւն հօտիդ: Հայրենի երկիրս և համայն ազգ ի սփիւռս կարօտին խաղաղութեան առ ի բուժել զընկալեալ վէրս իւրեանց, ուստի և պարտիք զուն զործել վտարել ի միջոյ հաւատացելոց զամենայն ինչ, որ հակառակ կայ խաղաղութեան և մի թողուլ զթշնամական արարս ընդդէմ Մայր Հայրենեաց Մերոց՝ Խորհրդային Հայաստանի և Կառավարութեան նորին: Յորդորեմք և զբահանայս և զամենայն պաշտօնեայս ընդ իշխանութեամբ Ձերով, կենցաղավարութեամբ և հաւատարմութեամբ առ մայրս մեր Ս. Եկեղեցի, օրինակ հանդիսանալ ամենայն հաւատացելոց, վառել զՎահ հաւատոյ և բարեպաշտութեան ի հոգիս հաւատացելոց: Ողջունեմք և օրհնեմք զամենայն Ազգային-Եկեղեցական վարչութիւնս և խորհուրդս թեմօրէից և եկեղեցեաց, որք աստ ի Միութեանս և յարտասահմանեան զաղութս:

Ողջունեմք և օրհնեմք յանուն Տեառն զամենայն հաստատութիւնս, որք հային ի պահպանութիւն եկեղեցեաց, դպրոցաց, յօգնութիւն աղքատաց և յայլ աստուածահաճոյ նպատակս, և ի զլուխ ամենեցուն զԲարեգործական Ընդհանուր Միութիւն ամենայն մասամբք, որ օգտակար և ընդարձակ զործունէութեամբ իւրով զբաւեալ է զսէր և զհամակրութիւն համայն Հայոց, սրբելով զարտասուս բազմաց նեղելոց և վշտացելոց յերեսաց անոք չբաւորութեան, բանալով դպրոցս և արհեստանոցս ի դաստիարակութիւն որոց և աղքատաց: Յորդորեմք զՁեզ ամենեանի, զվարիչս ամենայն բարենպատակ ընկերութեանց և հաստատութեանց, իրազեկ պահել զՄեզ յամենայն ձեռնարկութիւնս և ի զործառնութիւնս, զի և ես ուրախ եղէց ընդ յառաջադիմութիւն և ընդ բարեգործութիւն որդւոցս, օրհնելով զանուն Տուողին շնորհաց, որ հաստատեալ է ի հոգիս մարդկան զգութ և զսէր եղբայրական:

Հուսկ յետոյ ողջունեմք և օրհնեմք զՁեզ, ժողովուրդ Հայոց, որք բնակեալ կայք ի բնիկ հայրենի երկրին մերում և ի դրացի պետութիւնս Խորհրդային Միութեան: Ողջունեմք և օրհնեմք նաև զվտարանդի զաւակունս Մեր, նժգեհեալս յայլ և այլ սահմանս և ի քաղաքս արտասահմանեան ազգաց: Կենդանութիւն և պահպանութիւն հոգեւոր և թանգազին ժառանգութեանս, որ է Հայաստանեայց Եկեղեցի, կախեալ կայ ի հաւատոյ, ի սիրոյ և ի բարեպաշտական ըզգացմանց հաւատացելոցդ, զի չիք Եկեղեցի առանց ժողովրդեան, զի նա կեայ

և մնայ յաւիտեան ի վերայ Վիմին կենդանոյ, որ է հաւատ քրիստոնէական ի սիրտ հաւատացելոց: Արդ, սիրեցէք զմայրն Ձեր հաւատոյ, զսուրբ Եկեղեցի և եղբրուք հաւատարիմ որդիք նորա՝ ուր և գտանիցիք: Կատարեցէք զպարտիս Ձեր ծնողական՝ դաստիարակելով զզաւակունս ի հողի քրիստոնէական, ի սէր մայրենի եկեղեցւոյ, լեզուի, հայրենեաց և սրբազան աւանդութեանց: Ձանացաբուք պահել զբարձր անուն և զպատիւ ազգի յաշս օտարաց, յորոց միջի բնակեալ կայք, աշխատութեամբ, մաքուր եւ ազնիւ կենցաղավարութեամբ, բարեպաշտութեամբ և կատարմամբ քաղաքացիական պարտաւորութեանցդ: Մի անշատեսցեն զՁեզ տարածութիւնք հեռաւորք, ծովք և ովկիանոսք ի սիրոյ ընդ նիկ ժողովրդեան, բնակելոյ ի պատմական հայրենիս և ի Մայր Աթոռոյ, որ սիրտ կենդանութեան եղեալ է հողեր կենաց համայն ազգի, վկայ և կոթող յաւիտեանական պատմական անցից, ուրախութեան և վշտի, յաշողութեան և տառապանաց ժողովրդեան մերոյ դարուց ի դարս:

Որդեակք իմ հոգևորք, հատուածեալք յօտար սահմանս հեռաւոր ազգաց և պետութեանց, զկնի յորդորական բանից և օրհնութեան ունիմք ասել Ձեզ և բան ինչ մխիթարական և աւետաւոր, զի թէպէտ ըստ բերման դժբաղդ հանդամանաց աւերեցաւ երկիր մեր և տարազրեցաւ կենդանի մնացեալ ժողովուրդն ի սիրիւս աշխարհի, որոց մասն են և բազումք ի Ձէնջ, սակայն ողորմութեամբն Աստուծոյ չնորհեցաւ մեզ Արարատեան աշխարհն սահմանակից զաւառաւքն, որ օր ըստ օրէ ծաղկեալ բարգաւաճի ի շինարարութեան և ի քաղաքակրթական-գիտական և ի տնտեսական ամենատեսակ ձեռնարկութիւնս ի ձեռն բարեջան Կառավարութեան Խորհրդային Հայաստանի: Ժողովուրդ մեր ջան ի զործ եղեալ զաւանդականն իւր աշխատասիրութիւն և զեռանդ, նորոգէ զաւերեալ հայրենիս իւր, բարեփոխելով զնա յերկիր պտղաբեր և բարեկեցիկ: Մինչ ի հաստատութիւն Խորհրդային Կառավարութեանն ի Հայաստան աշխարհի, յերեսաց աղքատութեան երկրին հազարք հազարաց յազգէ մերմէ խնդրէին զգիւտ պատառ մի հացի յօտար քաղաքս Կովկասու, Ռուսաստանի և արտասահմանի, այժմ երկիր մեր ոչ միայն բաւարարէ զկարիս սննդեան և կենաց բնիկ ժողովրդեանն, այլ և հետզհետէ ընդունի ի ծոց իւր զցրուեալ որդիս յօտար սահմանաց: Ձայս յայտ առնեմք Ձեզ, որդեակք մեր սիրելիք, յուրախութիւն և ի մխիթարութիւն, յորդորելով զՁեզ սատարել բարոյապէս և նիւթապէս վերաշինութեան երկրիս, ըզկրթական և զբարենպատակ ամենատեսակ հաստատութեանց ասեմ, զվերաշինութեանէ քաղաքաց և զիւղօրէից, զգործարանաց և զծաղկմանէ երկրագործութեան, զի Դուք ոստ էք միոյ ծառոյն, արմատք և բուն կենդանութեան որոյ հաստատեալ կան ի պատմական հայրենիս մեր՝ ի Խորհրդային Հայաստանի:

Շնորհք, սէր և խաղաղութիւն եղիցի ընդ Ձեզ, ամէն:

Տուաւ Կոնդակս յամի շնորհաց Փրկչին 1933 ի 1 յունիսի
ըստ Տումարիս ՌՅԶԲ, ի Հայրապետութեան Մերում յԱ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, ի Վաղարշապատ:

թ. 1

(Իսկականին վրայ ստորագրուած է)

ԽՈՐԷՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՇԱՆ ԽԱՉԻՆ

Տասնևվեց տարիներ առաջ դէպի ծայրագոյն արևելք կատարուած ճամբորդութեան մը միջոցին, այս տողերը զրոյը շոգնաւին մէջ հանդիպեցաւ չինացի քրիստոնեայի մը, որ իր այլակրօն ազգակիցներէն մէկուսի անկիւն մը նստած, իր լեզուով տպազրուած պատկերազարդ Աւետարան մը կը կարդար։ Երբ թարգմանի մը միջոցաւ հարցուց իրեն թէ այդ գիրքին մէջ իր ամենէն շատ սիրած էջը ո՞րն էր արդեօք, մատներու արագ շարժումով մը չինացին յանկարծ բացաւ Յովհաննու այն զուլսը ուր խաչելութեան պատմութիւնն ու պատկերը գիրար կը բացատրէին։

Կը պատմուի նաև թէ երբ քարոզիչ միսիոնարներ Նոր Կրօնականտիա գոյն քրիստոնէութիւն աւետարանելու համար, երկար ատեն մարդեղութեան, երրորդութեան, անմահութեան և հանդերձեալ կեանքի մասին բոլորովին ասպարդիւն կերպով խօսելէ ու ճառելէ վերջ, երբ սկսան պատմել Քրիստոսի խաչելութիւնը, բնիկները, ամէնքը խոր քունէ մը կարծես արթնցած, ա՛յդ վայրկեանէն միայն կարող եղան մտածել թէ բան մը կը խօսուի իրենց. ու այդ վայրկեանէն մանաւանդ հասկցան թէ ի՞նչ է Քրիստոնէութիւնը։

Այս երկու մանրադէպերը նշանակալից են իսկապէս, որովհետև մեզի կը յիշեցնեն կամ մեր հոգեկան տեսողութեան մէջ կը նորոգեն պարզապէս ինչ որ կը կատարուի ամէն օր քրիստոնէական կեանքի իրականութեան մէջ։ Ոչ միայն մանուկը կամ թերակիրթը, ոչ միայն անուսը կամ քրիստոնէական մանր ուսմունքին նորրեմայ հետևողը, այլ ամենէն փորձ ու հմուտ և աւետարանական գիտութեանց մարզին մէջ ամենէն զարգացած զուլսը մինչև որ չլուսաւորուի խաչին խորհուրդովը, չի կրնար ըմբռնած ըլլալ Քրիստոսի կրօնքը։

Խաչը, բարոյական տիեզերքի նոր արեգակը, իր վառարանին մէջ կը կեդրոնացնէ ճշմարտութեան բոլոր ճառագայթները։ Ապրուած Աւետարանն է ան. և ատոր մէջ է իր կենդանութեան և զօրութեան բովանդակ զաղտնիքը։ Դադրած՝ խօսք մը կամ գիրք մը լինելէ, ինչպէս է ըստ ինքեան Աւետարանը, կեանքի իր մը կամ իրականութիւն իսկ է ան. փորձառութիւն մը, վսեմ ամփոփումը այն բոլոր բաներուն, զոր Աւետարանը պատմած կամ ծանուցած է ամենաբացայայտ կերպով։

Անարժէք է որ և է գործ կամ զաղափար, որ չի յանգիր բարոյական վախճանի մը, զոր չի պսակեր բարոյական որ և է նպատակ։ Կրօնքներուն նոյն իսկ՝ ճշմարտութեան ստուգանիշը իրենց բարոյականութիւնն է. ա՛յնքան աւելի կենսաւէտ և կենարար է կրօնք մը, որքան աւելի իր վարդապետութեանց խորքը բարոյականով է շաղուած։ Կրօններու պատմութեան լոյսին տակ՝ այդ սկզբունքով է որ կը դասաւորուին հաւատքի այն բոլոր դրութիւնները, որոնք սկիզբէն մինչև այսօր ուղղութիւն տուած են մարդկային հոգիին ամենէն ազնուական՝ ամենէն աստուածային բնազդին։ Ու բարոյականը, կրօնքին մէջ, ուրիշ անու-

նով՝ փրկութիւնն է ինքնին. այսինքն այն մտածումը որ կը բղխի սա զգացումէն թէ Աստուած յայտնած է և կը յայտնէ շարունակ ինքզինքը, տկար, դրժ-բախտ և ինկած մարդը բարձրացնելու, սփոփելու և զօրացնելու համար: Ու փրկատունէութիւնը, որուն նկարագրին կազմիչ տարրերն են այս ամէնը, ատու՞ր համար նոյն իսկ, զերագանցապէս բարոյական և բարոյացուցիչ կրօնն է երկրի վրայ, իր միակ նշանաբանն ըլլալով փրկութիւնը, որուն խորհրդանշանն է խաչը:

Բայց զիտնալ հարկ է թէ Աւետարանի բարոյականը ուսուցումի դրութիւն մը, դպրոցականութեան գործ մը, ծխաբանական ջանքերու դասաւորում մը չէ բնաւ: Անիկա մաս առ մաս և յաջորդական վերանորոգումով չէ որ վեր կ'աւնէ մարդը իր անկումին մէջէն. առաքինութեան վրայ առաքինութիւն աւելցնելով չէ որ կը լեցնէ հոգիին դատարկութիւնը. այլ սրտին մէջ կը նետէ յանկարծ կեանքի և գործելութեան (action) նոր սկզբունք մը, որ Աստուծոյ սէըն է ինքնին. և ինչպէս այդ պարզ բառը, սէր, անունն է բարոյական իրողութեան մը՝ որ ինք մինակը կ'ամբողջացնէ կեանքը, կը կարգաւորէ աշխարհը, կը կազմաւորէ քառսը, ու կը խաղաղեցնէ հոգին, նոյնպէս և այդ բարոյականը մարդոց փրկութեանը համար մարդացած Աստուած մը կուտայ մեզի, միակ լծակը, որ կարենայ բաւական խորը իջնել հոգիին մէջ, խախտելու, շարժելու և տեղափոխելու համար կեանքը»:

Խաչը, նշան մը, պատկեր մըն է, այսպէս, որ իր մէջ կը խտացնէ քրիստոնէութեան բարոյականին ամբողջ խորհուրդը: Անոր քարոզութիւնը, զոր «ճառ խաչին» կը կոչէ Առաքեալը, Հրէից ռաբբիները շփոթեցնող և հեթանոս իմաստասէրները շուարեցնող այդ պատգամը, ճշմարտագանցութիւն՝ ըստ երևութին, բայց անառարկելի ստուգութիւն իրապէս, մարդկային հոգիին ամենէն ընտանի սկզբունքներն է որ կ'աւետարանէ. սկզբունքներ՝ որոնց զգայարանը սիրտն ու խիղճն են մանաւանդ: Ատոր համար է որ պարզ և մաքուր հոգիները անմիջապէս կ'ընտելանան անոր, հոն գտնելով արձագանգը բնութեան՝ այսինքն Աստուծոյ առաջին յայտնութեանէն իրենց մէջ հնչեցուած ձայնի մը: Այդ է պատճառը որ սուրբերու երամները և նահատակներու բանակները, որոնք իրենց կեանքովն ու մահովը հիմնաւորեցին Եկեղեցւոյ գոյութիւնը, իրենց աներկեան հաւատքին զօրութեան խարխալ հաստատեցին և իրենց դիւցազնական արիութեան կամար կապեցին այդ նշանը, անոր մէջ խտացուած զգալով Հաւատքի, Յոյսի և Սիրոյ առաքինութեանց լրումը:

Սրտի և խղճի նոյն բերումներով և անվկանդ համոզումի միեւնոյն պայծառութեամբ չէ՞ միթէ, որ ամէնքս, իբր ազգ Հայոց և ժողովուրդ Հայաստանեայց, կ'ուղղուինք միշտ այդ աստուածային նշանին, ամէն անգամ որ տօնական պատենութիւն մը մեր մէջ կը նորոգէ անոր յուշը. ի՞նչպէս տասնեկինը դարեր երգեր ենք անոր խորհուրդն ու փառքը, ի՞նչպէս անոր զգացումն ու ձևը բնազդօրէն կարծես ամենէն հիմնական յօրինանիւթը (motif) դարձեր է մեր զրականութեան ու զեղարուեստին: Կարելի պիտի ըլլար թանգարան մը ամբողջ լեցնել նմոյշներովը բիւրատեսակ խաչերուն, որոնք, իբր քանդակ կամ իբր զարդ, հոգեւոր ներշնչումի օծութեամբ լեցուցած էին մեր սրբավայրերը եւ զրչադիրները, ազգային ճարտարապետութեան և մատենագրութեան մեծ ու փոքր յիշատակարանները:

Եթէ նայուածքիդ առջև շարեա խաչաձևերու այդ կոփուածքներէն կամ մանրանկարներէն երկտամանակ մը միայն, անոնցմէ պիտի ստանաս տպաւորութիւն մը՝ որ եթէ ցնծութեան զգայութիւնը չէ, չէ սակայն նաեւ բնաւ լալաղին տխրութեան այն թախիժը, որ սրտին ու մտքին մէջէն կը ծնի: Բան մը կայ անոնց շեշտ ուղիղ կացքին մէջ, որ պարզ ու պայծառ հոգիի մը մէջ շինուած կամբը կը հոսեցնէ, ու սաւառնաթիւ այն տարածուածքը, որ սեղմուած ու ճնշուած էութեանդ առջև ընդլայնուած հորիզոններ կը բանայ կարծես, հեռու՝ վիշտի և չարչարանքի ու է յիշատակ արթնցնելէ մէջդ. ընդհակառակը, լուրջ և շինիչ մտածումի, ազնուական և բարի տենչանքներու, համբերութեան, յոյսի, քաջութեան, սիրոյ և հաւատքի խորհուրդը կը կենսաւորէ հոգւոյդ խորը:

Այո՛, այն օրէն ի վեր, ուր իր վրայ մեռաւ մահը, այն օրէն ի վեր՝ որ անիկա յայտարարուեցաւ զերազանց պարծանքի միակ և հիասքանչ առարկայ, խաչը քրիստոնեայ հոգիին համար եղած է զօրութեան և կեանքի նշան մը և ներշնչարան մը. այդ զգացումով է որ մեր հաւատքը երգել կուտայ մեզ սըրտաթուեզ. «Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պսակեաց զքեզ խաչիւն իւրով...». ա՛յ տանջանքի զործիք չէ ան, այլ պսակ փառքի:

* * *

ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ

Երջանիկ է «ՍԻՈՆ», կարենալով այս անգամ զարդարել իր ճակատը պատճէնովը ամենայն Հայոց Հայրապետին առաջին սրբատառ կոնդակին, որ Արարատեան աշխարհի հայրենական քաղցրութիւններէն և Լ՝միածնի նուիրական սրբութիւններէն՝ տաան ամիսներէ ի վեր սպասուած և կարօտցուած ձայնի մը զեղեցիկ աւաչը կը բերէ մեզի:

Ճշմարիտ Հօրը և Բարի Հովիւին ձայնն է ան, ուսկից՝ ամէնքս սրբազործած լոյս միւռոնին բուրումը կ'ելլէ, և որուն մէջ՝ Լուսաւորչի և իր արժանաւոր յաջորդներուն, Ներսէսներու և Սահակներու, մինչև Խրիմեան, Իգմիրլեան և Գէորգ Վշտալի իրարու յաջորդած Հայրապետներու սրբին տրոփիւնն է որ կը լսուի կարծես՝ մեղմ բայց անպոտոր կշռոյթով մը, խոց բայց արի հոգիի մը կենսունակութեան մէջէն:

Արժեցնելու համար այդ ձայնը, պէտք է զիտնալ լսել զայն, իսկ կարենալու համար լսել զայն՝ պէտք է զիտնալ լսել նախ: Լսել՝ այսինքն լռեցնել մեր մէջ այն բոլոր լսեա և լսեզ զգացումները, որոնք ամիսներէ ի վեր նորէն կ'ազմկեն անա մեր ազգային և համայնական կեանքը, անիմաստ կազ ու կոփի ասպարէզ դարձնելով կրկին մեր զոյութիւնը, ամէն ուր որ նետած սփռած է զմեզ անգութ բախտի մը ձեռքը:

Ո՛վ որ կը ճանչնայ զինքը, համօրէն Ազգին Վեհը, Հայաստանեայց Եկեղեցւոյ նորընտիր Փահանայապետը, կարդալով կամ լսելով իր սրտէն ու զրէն հոսած այդ բաբախուն տողերը, պիտի ըսէ մտադիւր, ինքն է. շուրջ քառորդ

դարէ ի վեր Իզմիրեանի և Գէորգ Ե.ի կողքին դործող, ազգին յոյսի և վիշտի ելեւելի շրջաններուն մէջ շուարիլ չդիտող, կամքին միշտ քաղցրութիւն խառնելու և սրտին խռովքը անոյշ ժպիտի մը ճաճանչովը լուսաւորելու զաղտնիքն ու շնորհքը ունեցող այն ժիր հոգեւորականն է որ կը խօսի մեզի, մեղամաղճոտ հեքով թերևս, որ իր ծանրածանր հոգերուն ազդումէն է անշուշտ, բայց անվրէժանդ հողի մը կեցուածքովը, որ իր տոկուն և բարձր նկարագրին մեծութիւնը միայն կը յայտնէ:

Անտարակոյս աննման է անիկա, այդ կոնդակը, բոլոր իր նախընթացներուն, Գէորգ Գ.էն մինչև Գէորգ Ե. հրատարակուած անդրանիկ հինգ կոնդակներու, վասնզի ժամանակը՝ ուր կ'ապրի, ու հանգամանքները՝ որոնցմէ շրջապատուած է ան, արդի Վեհը, չեն նմանիր բնաւ այն ժամանակին և հանգամանքներուն, որոնց մէջ կ'ապրէին և որոնցմէ շրջապատուած էին իր հինգ նախորդները, այլապէս երջանիկ ու միևնոյն ատեն զուցէ և դժբախտ ամենայն Հայոց Հայրապետները:

Այժմ չկայ, աւա՜ղ, իր բնաշխարհիկ սահմաններուն մէջ բնակաւոր աւերամտեան Հայութիւնը, Հայաստանեայց վեց նահանգներուն և Կիլիկիոյ մէջ ու անոնց շրջակայքը, Բիւթանիոյ, Թրակիոյ, Փաղատիոյ, Պոնտոսի, Փոքր Ասիոյ ցամաքակղզիին ներսերն ու յառաջակողմը խայտացող հայկական այն կեանքը, որ իրրև որակ և քանակ միանգամայն այնքան կարևոր արժէք մը կը ներկայացընէր. այժմ չկայ իր ճեմարանովն ու վեհարանովը, իր զանձովն ու այլ կարգի ճոխութիւններովը հեղինակաւոր Էջմիածինը, որ կրնար ամէն կերպով արժեցընել իր հոգևոր իշխանութիւնը: — Այս պատճառաւ անշուշտ լայն սրտի այն շունչը որ կը սաւառնէր միւսներուն վերևը, կը պակսի թերևս հոս: Պէտք չկայ շատ զգայուն ըլլալու, խորհելու համար թէ ինչպէս կը ճարճատէր արդեօք զրիչը իր մատներուն տակ, երբ, մինչ անոր ներքև կուգային «զամենայն վարչութիւնս և զխորհուրդս թեմօրէից և եկեղեցեաց մերոց» բառերը, շարժապատկերի մը պէս կ'անցնէր իր մտածումին առջեւէն դատարկուած զաւառներուն ամայութիւնը, և թէ ինչ կսկիծ կը սղոցէր արդեօք իր սիրտը, երբ կը զրէր «Ողջունեմք... զվտարանդի զաւակունս մեր, նժդեհեալս յայլ և այլ սահմանս և ի քաղաքս արտասահմանեան ազգաց...»:

Բայց այդ իսկ պատճառաւ, աննմանօրէն բարձր և զովելի է իր սիրտը, որովհետև, զիտնալով հանդերձ այս ամէնը, այդ բոլոր յուսահատեցուցիչ և մորմոքեցնող պայմանները, անվարան քաջութեամբ յանձն առաւ խոնարհեցնել իր պարանոցը ահաւոր լուծին առջև, ձեռք առնելով խութերով և խարակներով լի մշտալեկոծ ծովուն վրայ տարուբերող նաւուն զեկը:

Քաջ Հովուապետի մը վայելուչ անկեղծութեամբ է որ մինչ մէկ կողմէ կը խոստովանի թէ Հայաստանի Խորհրդային Կառավարութեան բարեհաճութեան կը պարտինք իր բնորութեան աննախընթացօրէն անկաշկանդ կատարումը, զոր կը համարի բարենշան, միւս կողմէ տեսակ մը երկուանքով կը հարցնէ թէ պիտի կարելի լինի՞ ստուգիլ իրադործել նոր սահմանադրութեան, եկեղեցական բարեկարգութեան և այլ բազմատեսակ ծրագիրները, որոնք պարտադրուած են իր վրայ Լ'նդհ. Եկեղեցական Ժողովէն: Այդ երկուանքին պատճառը ոչ այնքան կառավարութիւնը կը թուի իրեն համար, ինչպէս պիտի ուզէին կասկածիլ զուցէ

ումանք, այլ ազգին ընդհանուր վիճակը, տնտեսական հոգեբույն մէջ մտաւայդ, քաղաքական փոթորկումներէ տարուբեր, ներքին պառակտումներով վիրաւոր, կրօնական անտարբերութեամբ ջլատուած ժողովուրդի այն կացութիւնը, որ մեքինն է այժմ, և ուր հոգևոր ու բարոյական գործի մը յաշոգութիւնը զրեթէ հրաշքէ մը կախուած է: Ու համոզուած է ինքը սակայն թէ պիտի կատարուի այդ հրաշքը, եթէ ամէն հայ սիրէ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին, որ մայրն է մեր հաւատքին, եթէ ծնողքները կատարեն իրենց պարտականութիւնը՝ քրիստոնէական հոգիով, մայրենի եկեղեցւոյ, լեզուի, հայրենիքի և սրբազան աւանդութեանց սիրով դաստիարակելով իրենց զաւակները. եթէ հայ ժողովուրդը իր տարաշխարհիկ կեանքին մէջ կարենայ օտարներուն առջև բարձր պահել իր ազգին անունը, պարկեշտ և բարեպաշտ կենցաղավարութեամբ և իր ապրած երկրին օրէնքներուն և բնակակից այլ ցեղերուն հանդէպ իր քաղաքացիական պարտականութեանց կատարումով. եթէ ամէնքս չմոռնանք երբեք ԼՂմիածինը, ազգային կենդանութեան այդ սիրտը, և կարենանք հոգով անանջատ պահել ինքզինքնիս անկէ՝ իրեւ հարազատ զաւակներ մեր անձկալի մօրմէն. եթէ, վերջապէս, ազգն ամբողջ, առանց այլևայլի, աննկատ և ողջմիտ իմաստութիւնն ունենայ խորհելու և ընդունելու թէ մեր հինաւուրց և ցանկալի հայրենիքը յարութիւն առած է իր գերեզմանական անշքութենէն, և տնտեսական, ճարտարադիտական և քաղաքակրթական բազմատեսակ ձեռնարկութիւններով վերականգնուած, ի վիճակի է ոչ միայն պատսպարելու և կերակրելու իր ամբողջ բնակիչները, այլ նաև իր հովանիին ներքև ընդունելու հետզհետէ աշխարհի չորս ծայրերը ցրուած անհայրենիք Հայութիւնը. ու այս ամէնը՝ անհուն ջանքերովը Հայաստանի Խորհրդային ներկայ կառավարութեան, որ, ատո՛ր համար նոյն իսկ, իրաւունք ունի անխտիր ամէնուն սիրոյն, մեծարանքին և երախտագիտութեան:

Ամէնուս, ամէն Հայու, պարտքն է կանգ առնել այս բառերուն ամէն մէկին առջև յարգանքով և երկիւղածութեամբ, իբրև անառարկելի իմաստութեան զոհար խրատներու առջև. լուել՝ լսելու համար Հօրը ձայնը, որ անկորնչական իրաւունքներու յուշքը կ'արթնցնէ մեր մէջ, նոյն տունն նորոգելով մեր սրտերուն խորը՝ անհրաժարելի պարտականութեանց զգացումը:

* * *

ՀԱՒԱՏԻՒՆ ԵՒ ՄՏԱԾՄԱՆ ՅՈՒՐԵՐ

ՔՐԻՍՏՈՆԵՒՅ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ

Քրիստոնէից բարոյականը աշխարհի մարդոց բարոյականը չէ բնաւ. անիկա այնքան չի նմանիր այս վերջինին որ՝ անոնք որ համարձակօրէն կ'ընդունին և հաւատարմաբար կը գործադրեն զայն, ընդհանուր մարդկութեան ծոցին մէջ կը կազմեն բոլորովին առանձին ցեղ մը, և, եթէ կարելի է ըսել, նոր մարդկութիւն մը: Այնքան քիչ կը նմանի անիկա ասոր, որ զայն դաւանողները անհասկնալի կը մնան զայն չգաւանդողներուն, ու հասարակաց կեանքը, եթէ ընդհանուր առմամբ քրիստոնէական ընթացք մը առած է, ինչ ինչ գիծերով անպատճառ երևան կը բերէ արտակարգ և խորհրդաւոր բան մը, չորուն անունը զայն ունեցողը միայն գիտէ: Որչափ ալ բարձր ուղուի հանել բնական մարդուն կարողութիւնները, առաքինութիւններ կան, որոնք քրիստոնէից միայն յատուկ են, ու զոհողութիւններ՝ որոնց քրիստոնեաները միայն ատակ են: Ինչո՞ւ. վասնզի անոնց հաւատքին մէջ նոյն իսկ, որ ազրիւրն է աստուածային գործին, կը բովանդակուի միւսնեքէն աւելի խորունկ և աւելի ամբողջական զոհողութիւն մը, որուն մէջ կանխադէտ ամբիօրուած են արդէն բոլոր միւսները:

Ա. Վ.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ՄԵՍԻԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Գ.

4. Յիսուս միմիայն հաւատաքի դիւցազն մը չեղաւ, բոլոր միւսներէն աւելի մեծ եւ աւելի ազնիւ. ինքն իսկ է որ իր անձին մաւսին կուտայ՝ միշտ բոլորովին առանց մեղքի ապրած ըլլալու վկայութիւնը. — Յիսուսի սրբութիւնը, որուն ցարդ ակնարկեցինք միայն, առանց հաստատելու զայն, պիտի չկարենար ապացուցուիլ իր կեանքի զործերուն վերլուծութեամբը: Այդ զործերուն ոչ միայն ամենափոքր մէկ մասն է որ կը ճանչնանք մենք (Յովհ. ԻԱ. 25), այլ եթէ Աւետարանները զանոնք ամբողջութեամբ իսկ աւանդած ըլլային մեզի, զժուար պիտի ըլլար անոնց միջոցաւ հաստատել զայն, քանի որ բարոյական կատարելութիւնը, ամէն բանէ աւելի հոգիի վիճակ մը ըլլալով, չի կրնար այդպիսի ապացուցումի ենթարկուիլ: Միմիայն անձնական վկայութիւնն է որ մեզի կրնայ տալ զժուարութեան բանալին. արդ, հետեւեալ տարրերով միայն կրնանք մօտենալ հարցին լուծումին.

ա) Փրկչին սրբութիւնը կը վկայեն միահամուռ բոլոր առաքեալները. (Գործք Գ. 14, Գ. 27, 30, Բ. Կորնթ. Ե. 21, Ա. Պետր. Բ. 22, Ա. Յովհ. Բ. 1, 2, Գ. 5, և այլն). Աւետարանի մասին իրենց ունեցած ամբողջութիւնը ո՛րքան ալ տարբեր եղած ըլլան իրարմէ, անոնք ամէնքը համաձայն են այս մասին: Այս միաձայնութիւնը, զոր չի խանգարեր ոչ մէկ տարակարծութիւն, ինքնին յոյժ նշանակելի կէտ մըն է արդէն, բայց ոչ անառարկելի փաստ մը, քանի որ վերջապէս աշակերտները չեն կրցած խորաշափած ըլլալ իրենց վարդապետին հոգին, և այդ ներքին սրբարանին մէջ է որ կը պարզուի մեղքին խորհրդաւոր և եղբրական տեսարանը:

բ) Միակ վճռական ապացոյցը կը մնայ ուրեմն Քրիստոսի իր իսկ իր անձին մասին տուած վկայութիւնը, որուն առթիւ սակայն նկատելի երկու բացառիկ կէտեր կան: Մին՝ Յիսուսի մկրտութեան իրողու-

թեան իբրեւ մեղքի խոստովանութիւն մը համարուիլը, որուն մասին ըսուեցաւ սակայն արդէն ինչ որ պէտք էր ըսել. և յետոյ, Յիսուսի իր մէկ խօսքը (Մարկ. Ժ. 18, Դուկ. ԺԼ. 19). «Զի՞ տես զիս բարի. չիք ոք բարի, բայց մի Աստուած». հաստատում՝ որով Յիսուս կը թուի մեղաւորներուն կարգը դասել ինքզինքը: Բայց անկարելի է ճշդել այս խօսքին իմաստը, եթէ իր բնագրական յեռուածքին մէջ վերադետեղենք զայն ուշադրութեամբ:

Իրեն զիմող խորայնացիին դատումով, Յիսուս վարդապետ մը, ուսուցիչ մը (ծւծάσκαλ. Մարկ. Ժ. 17), ուրիշներուն նման Թաբբի մըն է, զոր սակայն չի վարանիր կոչել «վարդապետ բարի», վասնզի չի տարակուսիր մարդուն՝ Աստուծոյ առջեւ ունեցած արժանիքին առջև: Ո՞չ ապաքէն իր մասին ալ կը խորհի ան թէ միշտ պահած է օրէնքը և կը սիրէ իր ընկերը իր անձին պէս (Մարկ. Ժ. 19, 20, Մատթ. ԺԺ. 18-20): Քրիստոս, տեսնելով իր խօսակիցին մտածութեան սխալ հիմունքը, կը սկսի զայն աւելի ճիշտ գաղափարի մը առաջնորդել: Ի՞նչպէս, կը գօչէ անոր, բարի կ'անուանես զիս. գիտե՞ս թէ ի՞նչ կ'ըսես. չե՞ս գիտեր թէ Աստուած միայն իրաւունք ունի այդ ստորոգելիին:

Ինքն իրմով չէ ուրեմն որ, այս պարագային մէջ, կը նախագրաւուի Յիսուս: Իր բարոյական մաքրութեան հարցը չէ որ ի նկատի ունի ան: Կ'ուզէ միայն փորձարկել եւ իրեն ցոյց տալ այս մարդուն սիրտին վիճակը: Իսկ եթէ անոր ազդեալէս կը յիշեցնէ թէ Աստուած է միայն սուրբ, պէտք է ընաւ մոռնալ թէ այլուր եւս կը հաստատէ թէ Աստուծոյ հետ բացառիկ յարաբերութեան մը մէջ է ինքը, թէ իր ծնունդին մասնաւոր հանգամանքը, որ կամաւոր հնազանդութեան մը զրոյմն ունի, կ'արտօնէ զինքը բոլորովին ինքնաշատուկ կերպով մը կոչուիլ Որդի Աստուծոյ: Այսպէս է այն վկայութիւնը զոր ան կուտայ իր մասին, եւ որուն երբեք չեն ընդդիմախօսած ոչ իր շուրջիները եւ ոչ իր տմբատանիները: Այս տեսակետով աւելի հարուստ է չորրորդ Աւետարանը (Լ. 34-36, 46. ԺԴ. 30, ԺԶ. 9, և այլն). Քրիստոսի սրբութիւնը անոր մէջ կ'երեւի ոչ միայն իբրեւ մեղքի անգոյութիւն մը, որ

բոլորովին ժխտական պայման մըն է, այլ նաև Հօրը հետ անընդհատ յարաբերութիւն մը, ամէն վայրկեան իր Աստուծոյն միջոցաւ կատարուած նուիրագործութեան մը ձևին տակ (Ա. 51, Ե. 30, Ժ. 30, Ժէ. 4, և այլն): Գալով համատեսականներուն, անոնք իր խորքին մէջ կը հաստատեն այդ վարդապետութիւնը: Զգուշորէն է թէ անոնց մէջ աւելի Քրիստոսի գործին վրայ կը խօսուի քան թէ անձին. բայց այդ փրկական գործունէութիւնը կ'ենթադրէ բարոյական սրբութիւն մը, զոր մագիւ չափ չ'ստուերածեր մեղքի ոչ մէկ բիծ: Յիսուս, որ իր աշակերտները կը հրաւիրէր Աստուծոյն թողութիւն խնդրելու (Մատթ. 2. 12), ինչպէս ինքզինքին պիտի վերադարձրէր թողութիւն տալու իրաւունք, եթէ մեղաւորներուն դասակից զգար ինքզինքը: Ինչո՞ւ պիտի խօսք ընէր իր արիւնին քաւարար զօրութեանը մասին (Մատթ. Ի. 28. ԻԶ. 28), եթէ պէտք ունէր իր մեղացն ալ քաւութեան: Ո՞ր իրաւունքով՝ ինք որ մեղի արդիւնց դատել (Մատթ. Է. 1) պիտի դատաւոր կանգնէր մարդոց (ԻԱ. 31-46), եթէ ինքզինքը գերիվեր չ'զգար զմեզ աստուածային սրբութենէն բաժնող ամբողջ անջրպետէն:

Այսպիսի յայտարարութիւններ սատեւսակ երկխոյրարանութեան մը առջեւ կը դնեն զմեզ. կա՞մ այս լեզուն զործածող մարդը — եթէ մեղի պէս մէկն էր — յիմար կամ հայհոյիչ անձ մը պիտի եղած ըլլայ, կա՞մ ինքզինքը բարոյապէս մաքուր զգացող մէկը, ինչ որ ներքին կ'ընէ իրեն՝ ստանձնել փրկագործողի եւ դատաւորի կրկնակ պաշտօնները: Արդ, առաջին ենթադրութիւնը անհաշտ ըլլալով բարձր բարոյականութեան այն նկարագրին հետ, զոր պարկեշտ եւ ուղղամիտ քննադատութիւնը միշտ ճանչցած է Յիսուս Քրիստոսի վրայ, ինքնին հարկադրել կը դառնայ այն եզրակացութիւնը թէ Քրիստոս իր սիրտին բովանդակ անկեղծութեամբն է որ ազատ եւ զերծ յայտարարած է ինքզինքը ամէն տրատէ: Ու եթէ հաստատած է իր այդպէս ըլլալը, պատճառն այն է որ այդպէս եղած է իրապէս, եւ չարութեան ոչ մէկ ստուեր չէ բծաւորած իր կեանքը. վասնզի ինքզինքը «լուսիս մեղաւորաց» կոչող Պօղոսի օրինակը (Ա. Տիմ.

Ա. 15. հմտ. Ա. Յովհ. Ա. 8) հոն է ահաւասիկ մեղի ցոյց տալու համար թէ խիղճը ա՛յնքան աւելի փափուկ կ'ըլլայ որքան աւելի մարդը մօտ ըլլայ մաքրութեան խնային: Որչափ ուրեմն պնդենք Յիսուսի կրօնական բարձրութեան վրայ, այնչափ աւելի պիտի ստիպուած ըլլանք խոստովանիլ որ, եթէ ամենաթեթեւ յանցանքի մը խղճահարութիւնը ունեցած ըլլար, պիտի քղազերծէր զայն խնդին, եւ թէ, ընդհակառակն, իր կատարեալ սրբութիւնն է որ կը չողափայլի այն վկայութեան մէջ զոր կուտայ իր անձին մասին, եւ որ մեղի ընդնշմարել կուտայ անոր անձնաւորութեան խորհրդաւոր խորութիւնները:

5. Մեղի այդ անգոյութիւնը կ'ենթադրէ որ Յիսուսի ծագումը նոյն չէ բնաւ միւս մարդոց ծագումին հետ, եւ րէ այդ արքեւորութիւնն է որ կը բացաւրէ Քրիստոս, երբ ինքզինքը Աստուծոյ միածին Որդին կը կոչէ. — Պէտք պիտի ըլլար յիշել հոս այն բազմութիւն յայտարարութիւնները (Մատթ. ԺԱ. 27, Մարկ. ԺԳ. 32, Յովհ. Գ. 13, Զ. 63, Ը. 58, Ժ. 30, և այլն), որոնց մասին պիտի խօսուի յետոյ, երբ կորզը գայ ներկայացնելու աւետարանական ուսուցումը: Բաւական ըլլայ դիտել տալ միայն հոս թէ համատեսական Աւետարանները բնաւ չեն անգիտանար այս նկարագրերը (Մատթ. ԺԱ. 27, Մարկ. ԺԳ. 32). եւ թէ Միածին Որդիին այս առանձնայատկութեան է որ բոլորովին կը վերածուին Փրկիչին մեխական զիտակցութեան բազկացուցիչ տարրերը: Անոր էութեան ներքնագոյն խաւերուն մէջ է որ կը թափանցենք հոս հիմակ: Միայն թէ ինչ որ, դուրսէն գննողի մը համար, վերլուծումի երկար աշխատանքէ մը ետքն է որ երևան կուգայ, Յիսուսի համար իրապէս եղած է թաքուն այն սկիզբը՝ որմէ յառաջ եկած է մնացեալ ամէնը: Իր անձին՝ Քրիստոսի գերագոյն պաշտօնները վերագրած ըլլալուն համար չէ բնաւ որ խօսքը կ'ընէ անիկա իր աստուածային էութեան, այլ ինքզինքը Աստուծոյ Միածին Որդին զգալուն համար է որ իր ժողովուրդին կ'երեւի իրր ատէր եւ փրկիչ: Իր մանկութենէն անիկա մեծցած էր՝ զերծ մեղքէ. ինչ որ ենթադրել կուտայ թէ ծնած էր մերինէն տարբեր վիճա-

կով մը. և որքան աւելի չափեց անիկա՝ զինքը միւս մարդերէն զատող այդ անջրպետը. այնքան աւելի յստակօրէն հասկցաւ Աստուծոյ հետ իր յարաբերութիւններուն բացառիկ հանգամանքը:

Այդ զգացումն է, տակաւին տարտամ և միամիտ, զոր անիկա կ'արտայայտէ երկոտասանամեայ հասակին, տաճարի տեսարանին մէջ, և որ, աւելի ետքը խորհրդաձեւալ համոզումի մը փոխուելով, զայն անդեղեւ կը դարձնէ իր յայտարարութիւններուն մէջ: Ազգելու համար, իր ծըրազրին համեմատ, ամբողջ աշխարհի վրայ, անիկա աշխարհի կը ներկայանայ նախ իրբեւ Եհովայի Օծեալը. այսպիսի էր, ինչպէս տեսանք, իր մետաղական պաշտօնին մասին իր կազմած զաղափարը: Եւ սակայն բուսական էր որ Յիսուս գիտնար թէ ո՞վ էր ինքը, և թէ ի՞նչ կ'ուզէր. պէտք էր նկատի առնէր նաեւ իր շրջապատը և հոն տիրող արամազրութիւնները, որոնք, ինչպէս պիտի ցոյց տայ իր գործունէութեան վտանգները, կրնային լուրջ արգելք մը ըլլալ իրեն: Գործելութեան ամէն ծրագիր՝ կ'ենթադրէ ծանօթութիւնը թէ՛ ձեռք բերուելիք առարկային, և թէ՛ զաղափարներուն անոնց որոնց գործակցութիւնը անհրաժեշտ կը նկատուի. արդ, Քրիստոսի և իր գործին նպատակը ճշդելէ վերջ, մեզի կը մնայ տակաւին հետազոտել թէ այդ ծըրազրը ո՞րքան կը համապատասխանէր Խրայելի հաւատալիքներուն:

Ժ. Գ.

ԽՈՐՀՈՒՐԳ ԵՒ ԽՕՍԳ

Մեր մէջ արդարեւեակ տալիս զաղափար կը ծնի ո՛չ քե մեր պատհան, այլ մեր իրաւունքին:

*

Իմաստունը միայն ազիս է:

*

Երբ զիսեա՝ զիսեալ քե զիսեա, և երբ չեա զիսեա՝ զիսեալ քե չեա զիսեա — այդ է ճշմարիտ զիսութիւնը:

*

Դպրոցականը, որ առաջիկային սկզբունքները սերտօրէն նստած է և տակաւին կ'անցնայ գեշ հագուստներէ և կոշտ կերակուրէ, ամառին յարմար չէ կրթութիւն ստանալու:

ՀԻՆ ՈՒԽՏԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԸ

Ա. — ԸՆԾՐՈՒԹԻՒՆԸ.

Քահանայապետ տիրողսը տրուեցաւ նախ Մովսէսի եղբոր Ահարոնին, ապա՝ անոր յաջորդներուն:

Աստուած ինք ընտրեց Ահարոնը (Ելք ԻԸ. 1): «Երբ մեռաւ ան, կ'ըսէ Յովսէպոս, իր որդիները յաջորդեցին իրեն, ու այնուհետեւ միեւնոյն պատիւը տրուեցաւ իր սերունդին: Ոչ ոք կրնար Աստուծոյ քահանայապետը ըլլալ՝ եթէ չկրէր Ահարոնի արիւնը: Միւս ցեղերէն ոչ մէկը, նոյն խիթազաւորը, չէր կրնար քահանայապետական պատիւին արժանանալ» (Հնիս. Դիրք Ի. Գլ. Ժ. 1):

Քահանայապետին մասէն յետոյ սովորաբար կ'ընտրուէր անոր անդրանիկ որդին, բայց ընտրութիւնը, որ, ինչպէս կը կարծուի, կը կատարուէր զլիսուոր քահանաներու ձեռամբ, կարելի էր նաեւ կայացնել անոր եղբայրներէն մէկուն վրայ:

Ահարոնի յաջորդեց եղիազար որ իր կենդանի որդիներուն ամենէն տարեցն էր: Հեղին ժամանակ, մեզ անձանօթ պատճառով մը, քահանայապետութիւնը անցաւ Իթամարի ճիւղին, որ Ահարոնի չորրորդ որդին էր: Ետքէն Սողոմոն պաշտօնանկ ըրաւ Արիաթար քահանայապետը՝ իր մատնութեան ու ապստամբութեան պատճառաւ ու պաշտօնը յանձնեց եղիազարի ցեղէն Սաղովկ քահանային (Գ. Թագ. Բ. 35):

Բաբելոնի գերութենէն յետոյ քահանայապետութիւնը անցաւ նախ հայրերէն որդիներուն, ապա քաղաքական իշխանութիւնը իրեն վերապահեց քահանայապետներ անուանելու իրաւունքը: Այսպէս Սուրբ թագաւորը Անտիոքոս Դ. Եպիփան իրարու ետեւ Ոնիաս Գ. ի յաջորդ կարգեց երկու անարժան քահանայապետներ՝ Յասոն և Մենեղաոս: Վերջինս չէր պատկաներ նոյնիսկ Ահարոնի ցեղին:

Ամպարիշտ Յակիմոս, պաշտօնի անցած Դեմետրիոսի ձեռամբ, թէեւ եղիազարի ընտանիքէն չէր, բայց Ահարոնի ցեղէն ըլլալուն համար ուրախութեամբ ընդունուեցաւ ժողովուրդէն (Ա. Մակ. Է. 14): Յու-

դաՄակարէի երկու եղբայրները՝ Յովնաթան և Շմաւոն, որոնք ժողովուրդէն ընտրուեցան (Ա. Մակ. Թ. 28-31, ԺԴ. 46-47), Եղիազարի ընտանիքին կը պատկանէին:

Վեց քահանայապետներ յաջորդաբար ընտրուեցան Մեծն Հերովդէսէն և երկուքը՝ անոր Արքեղայոս որդիէն: Իսկ ասոնցմէ վերջ եկողները նշանակուեցան նախ Սիւրիոյ կուսակալ Կիրենոսի ու ապա՝ անոր յաջորդներուն կողմէ: Հրէական պատերազմին ժամանակ ամենէն վերջին քահանայապետը դարձեալ ընտրուեցաւ ժողովուրդէն:

Առաջները ցկեանս էր քահանայապետի պաշտօնը: Արիաթար միայն՝ Բաբելոնի գերութենէն առաջ՝ ի կենդանութեան պաշտօնանկ եղաւ: Ետքէն երբ ընտրութեան իրաւունքը խից քաղաքական իշխանութիւնը՝ սովորական դարձան բռնադատեալ հրաժարումները: Այսպէս 70 թուականին Տաճարի կործանումը կանխող վաթսուն տարիներու միջոցին այնքան քահանայապետներ պաշտօնի կոչուեցան՝ որքան որ կոչուած էին Մովսէսէն սկսեալ մինչև Բաբելոնի գերութիւնը՝ եօթը դարերու ընթացքին:

Քահանայապետութեան համար պահանջուած ու եւէ տարիք չէր ճշգրտուած: Կը կարծուի թէ ընտրեալը պէտք էր ըլլար առնուազն քսան տարեկան, Յովսէպոսի Ղեւտացիներու մասին սա գրածին համաձայն. «Անոնք ծառայութեան կը մտնէին իրենց քսան տարեկանին և կամ անկէ վեր, ըստ իրենց պաշտօնին եւ դասակարգութեան (Բ. Մնաց. ԼԱ. 17): Սակայն Արիստորուդոս տասնեօթը տարեկան էր երբ քահանայապետ կարգուեցաւ Հերովդէսէն» (Հնիս. Գիրք ԺԵ. ԳԼ. Գ. 3):

Բ. — Նուիրագործումը.

Այս ծէսը Եհովան ինքն իսկ հաստատեց (Ելք ԻԹ. 1-37), և Մովսէս ճշգրտութեամբ կատարեց Աստուծոյ հրամանը՝ իբրեւ քահանայապետ նուիրագործելով իր Ահարոն եղբայրը: Արարողութիւնը տեղի ունեցաւ Վկայութեան խորանին առջև, ամբողջ ժողովուրդի ներկայութեան, հետեւեալ կերպով: Նախ լուացում՝ ի նշան մաքրութեան, զոր կը պահանջէր պաշտօնին սրբութիւնը, ապա՝ զգեստաւորում — շապիկ, պատմուճան, եփուտ, լանջապանակ,

զօտի և խոյր՝ վրան սրբութեան պսակով: Ամենէն վերջ օծում՝ գլխու և ձեռքերու: Նախապէս օծուած էր արդէն սեղանը՝ ցոյց տալու համար թէ Աստուծոյ նուիրուած քահանայապետն ու սեղանը անբաժան են իրարմէ:

Հրէական աւանդութեան մը համաձայն անյայտացաւ «օծութեան իւզօր Քաղդէացւոց Տաճարը կործանած ժամանակ, 588ին (Ն. Ք.): Թալմուտը քահանաներու երկու դասակարգ կը յիշէ — «օծեալ»ներ եւ «զգեստաւորեալ»ներ: Վերջիններս կը նուիրագործուէին միայն զգեստաւորումով:

Ահարոնի քահանայապետական օծումը վերջ գտաւ երեք զոհերով. մէկը մեղքի զուարակը (Ղեւտ. Ը. 14-17) կամ սովորական զոհը, երկրորդը՝ ողջակեզի խոյր (Ղեւտ. Ը. 18-21), և երրորդը՝ օրհնութեան խոյր, որուն արիւնը սրսկեց Մովսէս Ահարոնի պատմուճանին վրայ (Ղեւտ. Ը. 22-32):

Եօթն օր Ահարոն զիշեր ցերեկ անխափան մնաց Վկայութեան խորանի դրան մէջ՝ Տիրով պահպանութիւնը ընկելու համար, ու այդ շարթուան ամբողջ ընթացքին ամէն օր մատուցուեցան վերեւ յիշուած երեք զոհերը (Ղեւտ. Ը. 32-36):

Քահանայապետի նուիրագործման այս արարողութիւնը ապա շարունակուեցաւ քանի մը դար:

Գ. — Զգեստներ.

Քահանայապետի զգեստները երկու տեսակ էին, պարզ քահանաներու զգեստներ — պատմուճան, զօտի, գլխանոց կամ գլխի ծածկոյթ, և բուն քահանայապետական զգեստներ — եփուտ, լանջապանակ, մանիշակորակ կապոյտ կամ կապուտակ պատմուճան, օսկիէ թիթեղ, որուն վրայ քանդակուած էին Սրբուրիւն Տեառն բառերը, աղնիւ բեհեզէ կամ կտաւէ պարեզօտ (շապիկ), նոյն նիւթէն խոյր ու սեղնագործուած զօտի: Աւելորդ չենք համարիր նկարագրել մէկ քանին այս զգեստներէն կամ զարդերէն:

Նիւուսը կը բաղկանար թեթեւ լանջապանէ մը, զայն մէջքին ամրացնող երիզէ մը և ուսակալներէ կամ վահաններէ: «Վերջիններս, կ'ըսէ Յովսէպոս, արմկաչափ լայնութիւն ունէին ու բաց կը թողուէին կուրծքին մէջտեղը»: Վահանները ունէին

կտաւէ լայն ժապաւէնի մը ձեւը ու կը շըրջապատէին իրանը՝ մէջքէն մինչև անութները: Լանջապանը հիւստեամէ էր նուրբ բնահղէ՝ ասեղնագործուած կապուտակ, ծիրանի և կրկնակի կարմիր թելերով և ճամկաւորուած ոսկի թերթիկներով (եւք ԻԸ. 6, ԼԹ. 2): Գօտին, որ ամուր կը պահէր լանջապանին վարի մասը, նոյն գոյներով միենոյն նիւթէն շինուած էր (եւք ԻԸ. 8, 27, 28, ԻԹ. 5, ԼԹ. 5, 20, 21, Ղեւտ. Ը. 7): Վակաւները կամ ուսակաւները կը բաղկանային աջ ու ձախ կողմերէն ձգուած երկու կտաւէ երկններէ, որոնք զոյգ զոյգ կը ճարմանդուէին ուսերուն վրայ (եւք ԻԸ. 7), ու այնտեղ կային երկու յղուէն եղնագաքարեր, որոնց վրայ փորագրուած էին Խորայէլի տասներկու ցեղերու անունները, վեցը մէկ՝ և վեցը միւս քարին վրայ: Եփուտի կուրծքին վրայ բաց թողած տեղը զետեղուած էր լանջապանակը, որ՝ եփուտին հետ՝ կը ծառայէր պատգամ հարցնելու Եհովայէն: Ան քստնական հարիւրորդամէդը կողմերով քառակուսի հիւստեամէ մըն էր, միենոյն նիւթէն ինչպէս եփուտը, ու ինք իր վրայ ծալուելով տեսակ մը զրպան կը ձեւացնէր ու կը պարունակէր Ուրիմը և Թումիմը: Անոր ազուցուած էին երեքական շարքի վրայ չորս կարգ ձեւացնող տասներկու թանկագին քարեր, որոնք Խորայէլի տասներկու ցեղերը կը ներկայացնէին, իրեն նշան՝ յանձին քահանայապետին անոնց եւս ներկայութեան Եհովայի առջև: Լանջապանակը ոսկիէ հիւստեամէ ոլորուն շղթաներով և ոսկի օղակներով ամրացած էր քահանայապետի կուրծքին (եւք ԻԸ. 7, ԻԸ. 11-12, ԼԹ. 16-19): Գօտին մաս կը կազմէր եփուտին ու կտաւէ հիւստեամէ էր անոր նման (եւք ԼԴ. 29): Վերջապէս խոյրը, ան ալ շինուած կտաւէ, ունէր տեսակ մը փաթթոցի ձեւ (եւք ԻԸ. 4, 39, ԻԹ. 6, ԼԹ. 28):

Գ. — Պաշտօնը.

Քահանայապետը գերագոյն պետն էր աստուածային պաշտամունքի վերաբերեալ ամէն գործերու: Ան կը մատուցանէր բարակ ալիւրով և իւղով կրակի վրայ եփուած ամէնօրեայ հացի ընծան (Ղեւտ. Զ. 19-23): Իսկ օրական զոհերը քահանաներու ձեռքով կ'ըլլային յանուն քահանայապետին:

Մինչև Վերջինս մեծ տօներուն միայն կը մատուցանէր, պատգամ հարցնելով նախ Ուրիմի և Թումիմի միջոցաւ (*):

Քահանայապետը միայն հանդիսաւորապէս Սրբութիւն Սրբոցը մտնելու իրաւունք ունէր (Ղեւտ. ԺԶ. 2, 3, 17): Անիկա Տաճար կը մտնէր Շարաթի և ամսագլուխներու արարողութեանց և մեծ տօներու հանդիսութեանց առթիւ:

Թագաւորութենէն առաջ պարզ դատաւորներ էին քահանաները, իսկ գերագոյն դատաւորն էր քահանայապետը: Բարեւոյնի գերութենէն յետոյ քահանայապետը կ'անդամակցէր Սինեդրիոնին ու շատ անգամ կը նախագահէր անոր: Այս իրաւունքով էր որ կայափա, իրբե պաշտօնի վրայ կողով քահանայապետ, նախագահեց մեր Տէրը դատապարտող ժողովին:

Եթէ քահանայապետը արգիլուած ըլլար պաշտօնավարելէ, անոր տեղ կ'անցնէր քահանայ մը, որ կը կոչուէր ծառայող քահանայ կամ երկրորդ քահանայ: Կան աւելի քան մը օրինակները:

Ե. — Դերը՝ կրօնական եւ ընկերական տեսակէտով.

Քահանայապետը բացի սուրբ մատենաներու և մարգարէութեանց գերագոյն ուսուցիչն ու մեկնիչը ըլլալէ՝ էր նաեւ Աստուծոյ տան եւ սրբութեանց վերին պաշտօնեան: Սրբավայրն էր միայն իր տեղը և ոչ այլուր:

Պարզ զեւտացի մըն էր Սամուէլ, որ օծեց Սաուլըն ու Դաւիթը: Ետքէն Եղիա եւ Եղիսէ մարգարէներն էին որ ձեռք առին ազգին բարոյական առաջնորդութիւնը: Եղան քահանայապետներ որ միջամտեցին հանրային գործերու, երբեմն ի վնաս և երբեմն, ինչպէս Հեզի և Յովիաղա, յօգուտ երկրին:

Դերութենէն յետոյ Յագգուս, ըստ Յով-

(*) Պատգամ հարցնելու այս գործողութիւնը, ծանօթ թերեւս միայն քահանայապետներուն, խորհրդաւոր կը մնայ մեզ: Կը կարծուի թէ Ուրիմը եւ Թումիմը հանդիսաւոր բան մըն էր բան միւսները եւ երաշխաւորուած էր Աստուծմէ, որ երկու թանկագին ակունքներու միջոցաւ կը պատասխանէր այս կամ ոչ, մինչ պատասխանին մերժումը կը յայտնուէր այնպիսի եղանակով մը որ անձանք կը մնայ մինչեւ այսօր:

սեպոսի, քահանայապետական զգեստաւորումով Մեծն Աղեքսանդրի գէմ ելաւ ու իր ժողովուրդին համար անոր բարեացակամութիւնը հայցեց, ցոյց տալով նոր կայսրութեան մը հիմնուիլը զուլալող Դանիէլի մարգարէութիւնը (Հնխս. Գիրք Թ. Գլ. Ը.):

Սուրբ և հոյակապ քահանայապետ մը եղաւ Ոնիաս Գ. որ պաշտպանեց Տաճարը Հեղիոզորի ոտնձգութեանց գէմ (Բ. Մակ. Գ. 1-35):

Յաջորդ դարաշրջանին կը սկսի արդէն քահանայապետութեան անկումը: Բացառութիւն են Յովնաթան, Շմաւոն և Յովհաննէս Հիւրկանոս մակարայեցի քահանայապետները, որոնք, որքոնք քաջարի նոյնքան պատկառոտ կրօնքի հանդէպ, մօտաւորապէս եօթանասուն տարի իրենց ձեռքին մէջ պահեցին թէ՛ կրօնական և թէ՛ քաղաքական իշխանութիւնները: Իսկ Յովհաննէս Հիւրկանոսի որդին Արիստորուզոս Ա. սպաննեց իր մայրն ու եղբայրը: Աղեքսանդր Յաննէոս, Արիստորուզոսի եղբայրը, ամբարտաւան ու պատերազմիկ մէկը եղաւ աւելի՛ քան կրօնական զգացումի տէր քահանայապետ մը: Յաննէոսի որդին՝ քահանայապետ-թագաւոր Հիւրկանոս Բ. զահագորկ եղաւ իր եղբոր՝ Արիստորուզոս Բ. ձեռքով: Ասոր օրով էր որ եկաւ հռոմայեցի զօրավարը Պոմպէոս ու անձամբ մտաւ Սրբութիւն Սրբոցն ներս և պարզ ազգապետութեան մը վերածեց Հրէաստանը՝ Հռոմի գերիշխանութեան տակ:

Սաղուկեցի նիւթապաշտ քահանայապետները, որոնք չէին հաւատար ո՛չ հոգիի անմահութեան և ո՛չ յաւիտենական կեանքին, պերճ կեանք մը կը վարէին ու կ'արհամարհէին ժողովուրդը, անպատեւելով իրենց նուիրական սքեմը: Անոնք զբոսով կը գնէին քահանայապետութիւնը ու ապա աւելի վճարողին կը փոխանցէին զայն, ու այսպէս իրենց շահագիտութեանց ասպարէզ ընելով կը սրբապղծէին Աստուծոյ Տաճարը: Կը յափշտակէին մինչև իսկ պարզ քահանաներու իրաւունքը եղող տասանորդները:


Այս շրջանին է որ քաղաքական իշխանութիւնը, որուն գլուխը կը գտնուէր Մեծն Հերովդէս, իր ազդեցութեան տակ առ-

նելու համար քահանայապետները՝ անոնց զգեստները պահել սկսաւ Անտոնինեան աշտարակին մէջ, որոնք մեծ տօներու առիթով միայն դուրս կը հանուէին անկէ: Պոնտացի Պիղատոսի մեկնելէն յետոյ՝ Սիւրիոյ կառավարիչը՝ Վիտելլիոս արտօնեց որ յետ այնու քահանայապետները ազատօրէն գործածեն իրենց նուիրական զգեստները:

Այս դարաշրջանին չեղան այլևս ցկեանս պաշտօնավարող քահանայապետներ, արագ արագ իրարու յաջորդելուն պատճառաւ: Այսպէս քսան և ութ քահանայապետներ պաշտօնի անցան հարիւր հինգ տարուան միջոցին, այսինքն՝ Հերովդէսի գահակալութենէն մինչև Երուսաղէմի պաշարումը (*): Պաշտօնանկութենէն ետք ալ քահանայապետները կը պահէին իրենց տիտղոսները: Յիսուսը դատապարտող ժողովին մէջ կային եօթը նախկին քահանայապետներ:

Հին Ուխտի քահանայապետութեան, որ ստուերն ու նախատիպն էր Նորին, մեծագոյն ոճիրը եղաւ չճանչնալ և մահուան դատապարտելը Աստուծոյ Որդին և յաւիտենական քահանայապետը Յիսուս Քրիստոս, ոճիր՝ որ շատ չանցած պիտի քառուէր Հրէից ազգի չարաչար պարտութեամբ և Երուսաղէմի Տաճարին հիմնայատակ կործանումով:

Հայացուց՝ Մ. Ն. Ն.



ԽՈՐՀՈՒՐԳ ԵՒ ԽՕՍԳ

Փոխանակ վշտանալու քի ռեւէ պաշտօն չունիս, հոգ տար խորհելու քի ինչպիս կրնաս ինկիմից պաշտօնի յարմար կացուցանել: Փոխանակ նկողնելու քի տախիմ չես ճանցցուած, ջանաւ որ ճանցցուելու արժանի ըլլաս:

*

Երբ կը տեսնես քարի մարդ մը, խորհիւ աւուր նմանելու մտախի. երբ կը տեսնես շար մարդ մը, դուռ քու սիրոյ քննի:

*

Դիւրին չի գտնել մարդ մը որ երեք տարուան ինքնակրթութեան յետոյ հասած չլլայ երջանկութեան:

(*) Աննա, որ 15 թուականին (Յ. Գ.) պաշտօնանկ եղաւ Վալերիոս Գրատոսին, իր որդիներէն հինգին քահանայապետութեան ականատես եղաւ:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԲԱՐԻՋԻ ՆՕԹՐԸ ՏԱՄԸ

Ժայթփե՛ արգաւանդ հողէն վեր, ինչպէս բոցի փունջ մը պերն,
Մա՛յր եկեղեցիս. ու ցըցե՛, իբրեւ երգ մ'աստուածային,
Երփնապակիներդ մոգիչ, ուր մեր հոգիներն վառին,
Ու նետդ որ երկինքն ի վեր կ'անգայսի սլացումով մ'անվերջ:

Գուն ցեղի մը մեծ դարաւոր նիգին հուժկու յիշակերս,
Սլաֆի խուրճերուդ մէջ կը բըռնըւի անդաւաճարն անհուն.
Գըծոխֆի կընճիւր կը խորեմի մէջ փու ցնորհներուն,
Երկնային քեւի քափն է որ կ'առնէ վեր փու կամարներդ:

Կողերուդ միսին մէջ կը սարսըռայ երազ մ'ոսկեթով.
Ու, եղեմներուն լուսաւոր՝ սիրոյ սաստիկ կարօտով,
Մըղուած ներհըզօր իղձերէն կուրծֆիդ, որ կը բաբախէ,

Կ'երկարես քեւերդ, իբրեւ ուղեցոյց, խելայեղօրէն,
Գէպի երկնային վերաքելումիդ կայանն հըրեղէն,
Հըսկայ, որ ծունկի եկած ես շապկիդ մէջ փու ժանեակէ:

Թրգմ. Թ. Ե. Գ.

RAOUL GUYADER (Croyances Mortes)

ՀԱՂՈՐԴՈՒԱԾ ԲԵՐԿՐՈՒԹԻՒՆ

Հաղորդըւած բերկրութիւն, ո՛չ թէ բըխած իմ սրբէս,
Այլ բերկրութիւն՝ որ կու գայ ուրիշներու հոգիէն,
Երբ մանկութեան ձայնին մէջ որ կը հընչէ լուսեղէն,
Անհուն գանձեր կը բացուին կախարդավառ ու անես:

Ուրախութիւն՝ որ գուցէ ասեմօք ի'մրս էիր,
Ու ես բընա՛ւ փու շունչէդ լեցուիլըս չե՛մ իսկ յիշեր,
Ճըրա՛գ մ'էիր որ սիրոյ խորհուրդին մէջ կ'առկայծէր,
Ու ես կարօ՛ս եմ քեզի իբր աղօթֆի սրճալիր ...

Հիմա ջըղու մը ձայնէն ինծի կու գաս երկնաւէս,
Կամ նայուածֆի մը ծիրին կը բանաս հուրն իմ հոգւոյս,
Ու կը զգամ որ ամէն յոյս կ'անդորրանայ սրբիս հետ ...

Քու երազիդ կը հասնիմ գիծերուն վրայ ձեռներուս,
Կը տեսնեմ որ դիւքանֆիդ բացուեր է դուռն ոսկեղէն,
Ու զիս կանչող մը չի կայ մութ ֆարացած դէմքերէն ...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

ՄԱՄԲՐԷԻ ԿԱՂՆԻՆ

Հին օրերու իբրեւ վրկայ կենդանի,
Կ'ապրիս դուն դեռ, վաղեմի ծառ օրհնուած,
Սաղարթներուն ներքեւ որուն՝ հովանի
Գրսան, դարեւ առաջ, մարդիկ ու Աստուած:

Ոչ ոք գիտէ տարիներուն քիւր հոծ,
Որոնք՝ արեամբ ու արցունքով շրջմորուն,
Բազմիցս՝ իբրեւ հեղեղ, ըստպ՝ իբրեւ բոց,
Անցան վրայէդ, մինչ քեզ կոծէր վիշտն անհուն:

Կ'ապրիս դուն դեռ, աւ կը նրնջեն ոտքիդ փոխ,
Թելերուդ տակ հասակ նետած սերունդներ.
Դուն Նիոբէ՝ անոնց մէջ, սիրս ի խրոտով.
Յաւին հորձէն վիմաստուած, աներեւ:

Ասպնջական հովանիիդ ներքեւ դիր,
Ազգերու հօրն անցան օրերն օրհնածիր,
Հոն ընդունեց ան սրովբէներն՝ իրեն հիր,
Եւ աւետիք երազի մ'ոսկեծիր:

Շուփի՛դ ներքեւ մայր եղաւ օր մը Սառան՝
Աստուածընթիւ ժողովուրդի մ'ընդհանուր,
Ու խոստացուած մանուկին այն կախորհրան
Եղան ուտեղ, եւ տերեւներդ՝ խանձարուր:

Անճւռ օրեր, անցեալին ծոցը սուզուած,
Անեղծ յուշեր անմահական սէրերու,
Ոյց մէջ կարծես քէ կը խօսի դեռ Աստուած,
Դարձէ երբեմն մեր հոգին խընկելու:

Մեռան ամէնքն, այլ դեռ ապրիս պիտի դուն,
Խոժոռ պահնորդ շիրիմներու անհանաչ.
Դուն պատմութիւնն եւ կոթողուած դարերուն.
Մատենն՝ որուն չէ հալած բնաւ ոչ մէկ աչ:

Ծառ դու զառամ, պերն փառներու խուն բեկոր.
Մոյքերուդ վրայ հակած մարմնովդ այդ նրկուն,
Քրմապետի մը կը նմանիս զբլիսիկոր,
Զոր կը տանջէ խորհուրդներու խռովքն անհուն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՋ ԵՒ ՇՈԹՈՒԿԱՆՑ ՏՈՂՄԸ

Այս միևնույն Դաւիթ իշխանը նոյն սրահում, որ իշխանական գերեզմանատուն է շատ տոհմերի համար, արեւելեան կողմից՝ Ս. Սարգսի դրան մօտ, կանգնել է մի խաչարձան իւր հօր դամբարանի վերայ. պատուանդունը գորշ, խսկ բուն խաչաքարը կարմիր քարից, նուրբ քանդակուած, նաև խորքում, դաշտի վերայ. շատ գեղեցիկ են քանդակուած անօթները (փարչերը): Խաչի վերին թևերի մօտ՝ երկու կողմից՝ երկու վիշապ, մէկի պոչն էլ վիշապագլուխ: Խաչարձանի ճակատին հետեւալ արձանագրութիւնը կայ.

«Ես Դաւիթ իշխանաց իշխան կանգնեցի զսբ. նշանս, գերեզմանի հաւր իմոյ Գրիգորի ողբ երկրպագեք յաղաթս յիշեցէք»:

Խաչարձանի առաջ՝ ներքեւում ձգուած է մի տափակ քար, որի տակ ամփոփուած էր ննջեցեալը և վերան գրուած. «Գրիգոր»:

Խժկոնից վանքի արձանագրութիւնը ոչ միայն հաստատում է այս խաչարձանի տուած տեղեկութիւնը Դաւիթ իշխանի հօր անուան մասին, այլ և մանրամասնութիւններ նորա անձի և զաւակների. «Դաւիթ որդի Գրիգորոյ զաւրավար ամիր սպասաւարին Զաքարիայի» իւր զաւակներին՝ Գրիգորի և Գայլ Շէրպարիքի(1) հետ տալիս է Վահանաճի գիւղի կէսը Ս. Սարգսին՝ յիշատակ իւր և ծնողներին և ստանում հայր Յովհաննեսի, վարդապետի(2) և միւս միաբանների կողմից բոլոր եկեղեցիների պատարագները ամէն տարի Դաւիթի և Յակոբայ, Պողոսի և Պետրոսի եւ Շողակաթի տօներին (պատկ. 13. ձախ կողմի արձ.): (3):

1. : Յանուն այ ՈկԳ: Թուականիս:
2. : Ես Դաւիթ որդի Գրիգորոյ զ
3. աւրավար ամիր սպասաւարին Զաք
4. արիաի տեսի զպայծառութի սբ
5. ուխտիս Խժկանից ես եւ որդիք իմ
6. հարազատք Գրիգոր և Գայլ Շէր
7. պարիք եւ էտու զիմ զսէփհական
8. զգիւղն զՎահանաճիղը(1) զկէսն
9. ի սբ Սարգիս յիշատակ ինձ և ծն
10. ողաց իմոց վասն ողո հայրս Յովհ
11. նէս եւ վարդապետս եւ այլ միաբա
12. նքս հաստատեցին զԴաւթի եւ զ
13. Յակոբա զՊաւղոսի և զՊետրո
14. սի եւ զսբ Շողակաթին զպատարա
15. զն յամենայն ամի ող լինի յամ
16. ենայն եկեղեցիքս ինձ առնել ան
17. խափան էթէ ոք հակառակի ի հար
18. անց եւ կամ ի պատրոնաց եւ զի
19. մ զյիշատակս խափանէ ողչա
20. փ ամ. աւրհնած է այնչափ այն մարդն
21. (գարնէղի վերայ) անիծեալ է:

Այս բոլոր արձանագրութիւնների մէջ, Դաւիթ անունով իշխանին մենք նոյն անձնաւորութիւնն ընդունեցինք. արդեօք համապատասխան է այդ իրականութեան և հիմք ունինք այդպէս ընդունելու:

Նախ Զաքարիա մեծի կողմից Հաղարատի ՈՄԹ. և Խժկոնից Ոկ Թուականների արձանագրութիւնների մէջ Դաւիթը կոչուած է որդի Շոթակայ. այդպէս է անուանում ինքն իրեն նաև Դաւիթ Սանահնի ՈՂԱ. Թուի արձանագրութեան մէջ, իսկ Բռնաւորը իւր յիշատակարանի մէջ Դաւիթ «Շոթոականց»: Յաճախ է պատահում արձանագրութիւնների և յիշատակարանների մէջ, որ «որդիք» կամ «թոռունք» այս ինչի կամ այն ինչի ազգանուն կամ տոհ-

(1) Մեզ թուում է արձանագրութեան «Գայլ Շէրպարիք» մի անձն է երկանուն:

(2) Վարդապետը հաւանորէն Պաւղոսն է, որ յիշուած է աւետարանի յիշատակարանի մէջ:

(3) Խժկոնից վանքին եւ նորա արձանագրու-


թիւների ամբողջութեան մասին առանձին յօդուած պիտի գրենք:

(1) Զորորդ տողում «զպայծառութի» բառի մէջ

մի նշանակութիւն ունի. օրինակ Գրիգոր Անուարդեցու դէմ Ստեփանոս Օրբէլեանի զլխաւորութեամբ գումարուած ժողովի ձեռնարկին ստորագրում են «որդիք բարեպաշտ իշխանին Պոռչայ» Պապաք եւ Էաչի. մինչդեռ Էաչին Պոռչի թոռն է եւ ոչ որդին⁽¹⁾: Դրածորի դպրոցի Յունան գրելը իւր յիշատակարանը թուագրում է ի միջի այլոց՝ «իսկ ի տեղւոյս տէրութեան թոռանց մեծին Պոռչա Ամիր-Հաստնա եւ Զումալի», իսկ նրանք Պոռչի թոռնորդին

դի Շոթոռկայ» պէտք է հասկանալ հոմալոր «Դաւիթ Շոթոռկանց» արտայայտութեան, այսինքն իբրեւ ազգանուն:

Ապա տեսանք, որ Սանահնում խաչարձան կանգնող Դաւիթ իշխանի հօր անունը Գրիգոր է, ինչպէս Խժկոնից վանքի ՈկԳ. թուականի արձանագրութեան Դաւիթ զօրավարի, և որովհետեւ սորա որդու անունն էլ Գրիգոր է, ինչպէս և Շոթրոկանց Դաւթինը, պապի անունով և թոռ կոչուած, երկուսն էլ կապուած Սանահնի



Պատկ. 13

են⁽²⁾: Պոռչի «թոռն» է կոչուած Գեղարդի Յովհաննէս եպիսկոպոսը, որ ապրում էր 1475 թուին, Պոռչից մօտ 200 տարի յետոյ⁽³⁾: Այդպէս էլ այստեղ «Դաւիթ որ-

և Խժկոնից հետ, իրուամբ եզրակացնել կարող ենք Դաւիթ Շոթոռկայ որդու, խաչարձան կանգնող Գրիգորի որդի Դաւիթ իշխանի եւ Խժկոնից Դաւիթ զօրավարի անձնաւորութեան նոյնութիւնը:

ւը միացած է քի ծոցի հետ: Ութերորդ տողում դ եւ ք մի եւ նոյն ծոցի վերայ միացած, եւ զի բոլորակի ներքեւի հորիզոնականը. մեզ թւում է զրիչը սխալուել է եւ այդ ձեւով ուղղել իւր սխալը. այդ դէպքում պէտք է կարդալ «զվահանաւոյ զիկսն» Բանակկերորդ տողում աճ կոտրած: Արձանագրութեան դաշտը սպիտակցրած է, բայց յետոյ:

(1) Օրբէլեան. Դուկ. հրատ. 463: Մեր «Խաղբակեանք». եր. 145. 183:

(2) Մեր «Խաղբակեանք». 200—202:

(3) Անդ. 232:

Դաւիթ Շոթոռկանցը ՈԶԵ. թուականին զեռ ևս կենդանի էր, երբ նորա հովանաւորած ազատներից Բռնաւորը եւ Տղատիկինը գրել են տալիս իրենց աւետարանը և նուիրում Տ. Աբաս եպիսկոպոսի եւ Պաւղոս վարդապետի ձեռքով Խժկոնից վանքին: Չորս տարի յետոյ՝ ՈԶԹ (=1240) թուականին նոյն ամուսինները նուիրում են մի այգի ևս և արձանագրել

տալիս Ս. Սարգսի պատին. բայց այստեղ Բոնաւորը չէ յիշում այլ ևս Դաւիթ իշխանին, այլ նորա որդի «պարոն» Դրիգորին միայն, որի «ողորմութեամբ» նա կատարում է իւր ընծայարարութիւնը: Այստեղից եզրակացնել կարող ենք, թէ արդէն մեռած էր Դաւիթ և իշխանութիւնն անցած նորա աւագ որդուն⁽¹⁾: Այնուհետև չունինք տեղեկութիւն այս տոհմի մասին:

Փ.

Այստեղ իսկապէս պէտք է վերջանար մեր խօսքը. բայց ձեռքի տակ ունինք մի գործ, որ կարծում ենք Իգնատիոսի հետ պիտի կապել, թէև և հաստատուն կերպով պնդել չենք կարող թէ նորանն է:

Պատերազմի ընթացքում մեր ձեռքով իջմիածին է բերուած և մատենադարանին յանձնուած Ղարաբաղի Մեծչէն գիւղի նըշանաւոր «կարմիր Աւետարան»ը, որ թուականով երկրորդ հին ձեռագիրն է Հայոց մէջ, գրուած ՅՄԸ (= 909) թուին «ի կոստանդիանոպոլիս ի ձեռն թութեան ծառայի ծառային Քի. Տն. Աշոտոյ»: Բուն աւետարանը իւր մէկ հատիկ մանրանկարով, բնականաբար, այստեղ մեր քննութեան նիւթ լինել կարող չէ, բայց նորան կցուած է 5 թերթ, 10 խորաններով, և Մատթէոսի ու Ղուկասի սկզբնաւորութիւնների առաջին թերթերով:

Նորոգութեան այս յաւելումը, թէև թուական չունի, բայց ցուցումներ ունինք որոշելու նորա ծագման մօտաւոր ժամանակը. խորաններից մէկի (5ա) գերանների վերայ կանաչ գաշտում գեղին գոյնով գրուած է, «Ոհ թաթար, վայ աւուրն որ եկիր, անցուցեր գաշխարհս Ոհ ներեցեր Ած. անշափ արիւնհեղութիւնս»: Այս խօսքերը կարող են գրուած լինել մօտաւորապէս 1236-1242 թ. թ. կամ քիչ յետոյ, Թաթարների արշաւանքի անմիջական ազդեցութեան տակ՝ նրանց նուաճողական

չըջանում. այդ թուականներից յետոյ արդէն հայ իշխանները համակերպուել էին նոր պայմաններին և ոչ միայն ենթարկուել Թաթարների իշխանութեան, այլ և հաշտութեան պայմանների համաձայն իրենց զորքերով մասնակից նրանց դէպի Փ. Ա. սխայի խորերը՝ երզնկա, Սեբաստիա, Կեւսարիա կատարած արշաւանքներին⁽¹⁾:

Ժամանակի այսպիսի որոշման միանում է և ուրիշ հանգամանք՝ խորանների նկարչի անունը. Եւսերիի և Կարպիանոսի թղթակցութեան վերջում, գրուած փոքր երկաթագրով, գրիչն աւելացնում է, Չա. «Եւ զԻգնատիոս յոքնամեղ գրիչ յաղաթ(?) յիշեա ով տր. իմ, ևս դու յիշեալ լիցիս ի տր. ամէն»: Երկրորդ անգամ նկարիչը յիշում է իւր անունը Յա. խորանի գերանների վերայ (պատկ. 14). «Ած. ողորմես ստացողի սորա և մեզ», ներքեի գերանի վերայ. «Տր. Ած. ողորմես Իգնատիոսի: ամէն», շատ նման Իգնատիոս Հոռոմոսցու խոշոր երկաթագրով գրութեան: Եւ վերջապէս երրորդ անգամ իրեն յիշում է Յր. նկարած խաչի (պատկ. 15) տակ, ներքեի գերանի վերայ. «Սուրբ նշան աւգնեայ մեղաւորիս Իգնատիոսի», ինչպէս Իգնատիոս Հոռոմոսցին Հաւուց թառի աւետարանի խաչի տակ գրել էր «բարեխաւս Իգնատիոսի»:

Սրանց վերայ աւելանում է ևս հետեւեալը. աւետարանիս մէջ ունինք միջին, ուղղանկիւն երկաթագրով այսպիսի մի յիշատակարան. «Արդ ևս յամենայնի նուաւստ տր. Սարգիս ստացյալ սր. աւետարանս անջինջ յիշակ (?) ինձ և իմ ծնաւդացն որք ընթեռնոյք յիշեցէք ի Դս.»: Ո՞վ կարող է լինել այս տէր Սարգիսը: Գրութիւնից դատելով ժամանակակից է նա Իգնատիոս նորոգող նկարչին, և որովհետև վերև տեսանք, որ նա իւր մեկենասին «տր. իմ» է անուանում, անհաւանական չէ, որ հէնց յիշատակարանի տէր Սարգիսը լինի աւետարանի նորոգել տուողն ու երկրորդ ստացողը: Ա՛րդ, մեր Հոռոմոսցի Իգնատիոսին ևս ժամանակակից է Անիի արքեպիսկոպոսներից Տէր Սարգիս, որի անուան յիշատակութիւնն ունինք ԶԺԱ.

(1) Ըստ այսմ Շոթականց տոհմի հետեւեալ ճիւղագրութիւնը կը ստանանք.

Շորաիկ կամ Շորոսիկ

Դաւիթ. Վաճեիկ(կինը?). Սարգիս և Շեղաբիւ.


Դրիգոր, Դայ-Շեղաբիւ (մի՞ տնձն):

Աճրատ, Արշուկ, Արգուխարուն:

(1) Գանձակեցի՝ Ղուկ. հրատ. 264 | 5 — 269: Տես ևս մեր Խաղաղեանք եւայլն, եր. 19, ծանոթութիւն:

(= 1262) Թուին Բագնայրի արձանագրու-
թիւնների մէջ, իսկ Ալիշան մեզ անյայտ
աղբիւրների հիման վերայ նորա ժամա-
նակը նշանակում է 1245-1276 թ.։ Այս
բոլորը զարթեցնում են մեր մէջ երկու Իզ-
նատիոսների նոյնութեան միտքը։

բական և Թուլունների ձեւակերպութեամբ
սասունեան յետին աւանդների հետ կա-
պուած, եւ մասամբ, գուցէ, այդ պարզ,
գլխաւորապէս կլինեմարիումով զօգորուած,
խորանները Իզնատիոսի աշակերտների գոր-
ծերը լինին. այդ ասել կարող ենք, յատ-




Պատկ. 14

Բայց նոյնացման մտքի դէմ կայ լուրջ
դժուարութիւն եւս, որ երկու արուեստ-
ների տարբերութիւնն է։ Սակայն այդ տար-
բերութիւնը կարող է մասամբ օրինակի
ազդեցութեան հետեւանք լինել, որ ան-
պայման հին է, երկրաչափականով արա-

կապէս, Մատթէոսի և Ղուկասի սկզբնա-
ղարդերի նկատմամբ, որ տարբեր են նաև
խորանների արուեստից, բայց ժ.Գ. դարու
արեւելեան Հայաստանի առանձնայատկու-
թիւններով։ Թէական համարելով այս բո-
լորը, աւելորդ չհամարեցինք, որպէս հա-

մեմատութեան նիւթ, տալ եւ Մեծէնի «կարմիր Աւետարանի» նորոգութեան մանրանկարչութեան մասին համառօտ տեղեկութիւն մի քանի լուսանկարների հետ, ապագային թողնելով նորագիւտ փաստերով խնդրի վերջնական պարզաբանութիւնը:

Երկու սեան վերայ, լիւնետի մէջ երեք հիւսկէն բոլորակ եւ երկու կէս բոլորակներ. կամարի մէջ ծիածան, անկիւններում եռատերեւի ցողուններից հիւսուածք: Ծակատի եռատերեւի երկու կողմից մի մի սիրամարգ. եռատերեւի թերթերի հպման




Պատկ. 15

Եւսերիւ եւ Կարպիւնոսի թղթակցութեան միայն երկրորդ երեսը կայ, «եւ վիզնաւորոս յօքնամեղ եւայլն» յիշատակարանի հետ, որ մէջ բերինք վերև: Խորանը

անկիւնում մի մի կարմիր գնդակով: Աջ սեան կողքից պայմանական ծառ պտուղներով: Եւ «Կանոն անաշին յորդածան չորեքին»

գրուած է երեքքառորդական բոլորակի մէջ. կամարի զարդը ծիածանի բեկուած ճառագայթներ, ճակատի կեղրոնում անօթի երկու կողմից մի մի կաքաւանման թռչուն, պարանոցները, թիւերը մէջքի վերայից և պոչի մօտ մանեկաւորած: Լիւնետի վերայ քառանկիւնի խորանի ան-

սանցքում: Ճիշդ սորա նման է «կանոն երկրորդ յորս երեքն» միայն խորանը չորս սիւների վրայ, եւ տախտակի վրայ ձախ կողմից, բացի ճակատի երկու կաքաւաներից, մի երրորդ կաքաւ եւս, մանեկաւորած, գլուխը յետ է դարձել, չատ նման ժ. զարու փղոսկրէ կազմով աւետարանի



Պատկ. 16

կիւններում մի մի մեծ երկրաչափական հիւսկէն վարդեակ, նրանց մէջտեղը եւ ներքեւի անկիւններում մի մի փոքրիկ վարդեակ ութ ճառագայթի խաչաձևով. համաբարբառը երեք սիւներով. ձախ կողմից ներքեւում պոյմանական մի ծառ լու-


մի կաքաւին: Սիւների խոյակները կիսաբոլորակի վերայ տափակ տախտակ, իսկ խարխիսներում ընդհակառակը: Պոյմանական ծառն այստեղ աջ կողմն է: Այս խորանի տախտակների վերայ է գրուած «Քս. Ած. ողորմեա Իգնատիոս նկարչի

ամէն», եւ «Տր. Ած. ողորմեա ստացողի սորա ամէն»:

«Կանոն երրորդ յորս երեքն» (պատկ. 16) արժանի է ուշադրութեան ճակատի երկու սճաւորած եւ կուեկու պատրաստ աքաղաղներով, պարանոցները եւ պոչե-

«Կանոն հինգ յորս երկուսն» մի խորանով, «Կանոն զ. երրորդ յորս երկուսն» եւ «Կանոն եւթն յորս երկուսն» երկուսը միասին մի խորան (պատկ. 17). սիւները իրենց խարիսխներով եւ խոյակներով նման նախընթացներին, սիւների բունները զար-

Պատկ. 17



րը մանեկատրած: Խորանի հիմք կազմող տախտակի վերայ գրուած է. «Մեղայ քեզ Ած. ողորմեայ ինձ Ած.», իսկ ներքեւի տախտակի վերայ. «յորժամ դայցես ի սոսկալի աւուրն»: Սրան համապատասխան է կանոն չորրորդը, գեղեցիկ եւ մըրզով լի (կարմիր գնդակներ) կողովով:

զարուած են պարանահիւսով կամ ծիածանի գոյների բեկումներով: Նման են նաեւ երկու խորանների լիւնեաները, վերեւի անկիւններում մի մի վարդեակներով. միայն ձախ կողմինը բոլորակի մէջ ութ ճառադայթներով, միջին տարածութիւնը ութ եռանկիւնու բաժնուած սուր ծայրերով դէ-

պի կեղորոնն ուղղուած մի մի եռատերեւով, իսկ աջ խորանի վարդեակները հիւսկէն բոլորակներն մէջ ութ ոճաւորուած ձուածններով: Խորաններն ալ և ձախ շուսանցքների կողմից, գերանի վերայ մի մի կողով, լայն բերանով և երկու անգամ գօտեւորած: Ծակատի թռչունների պարանոցներն ու պոչերը գօտեւորած. սիւնների կողքերի մի մի պայմանական ծառազարդ, բունները օղակաւորած:

«Կանոն Ը. երրորդ յօրս երկուն, կանոն թ. երրորդ յօրս երկուն» մի խորանով բոլորովին նման «կանոն տասներորդ» ին. միայն առաջինը չունի աջ կողմի կողովը. տասներորդի գերանի վերայ գրուած է. «Ած. ողորմեա ստացողի սորա եւ մեզ», ներքին գերանի վերայ. «Տր. Ած. ողորմեայ իզնատիոսի: ամէն»: Կողովի մէջ կարմիր գնդակներ (խնձոր, նուռ), Խորանի տարածութիւնը ցողունների հիւսուած է մէջտեղում տերև, իսկ շրջանակը կանաչ և կարմիր գոյներով մէջը զարդարուն եռանկիւնների շարք է. ճակատի կեղորոնում մէկը հիւսուածքի զարդ, իսկ տասներորդինը հնգատերև, տերևների միացման տեղում կարմիր գնդակով:

Կանոնների զարդագրութիւնը վերջաւորուած է գեղեցիկ ձևակերպուած մի խաչով, եռամասնեայ կամարի վերայ կալմուած խորանով, որ հաստատուած է երկու սիւնների վերայ (պատկ. 15): Այս և միւս սիւնները, ինչպէս և եռամասնեայ կամարը, երևան են գալիս մեր ճարտարապետութեան և մանրանկարչութեան մէջ ԺԱ. դարից սկսած. մեր խորանների օրինակն էլ իւր ամբողջական ձևակերպութեամբ այդ դարի հետ պիտի կապուած լինի, թէև մի քանի մոտիւններ՝ կողովներն ու ոճաւորած թռչունները աւելի վաղ՝ ասորական և սասանեան աւանդներ են մատնանշում: Խաչը հաստատուած քառանկիւնի պատուանդանի վերայ, որ զարդարուած է բուսական օրնամենտով. երկու կողմից գեղեցիկ աշտանակների վերայ հաստատուած վառուող, զարդարուն մոմերով: Ներքին տախտակի վերայ եղած յիշատակութիւնը նկարչի անուան՝ տեսանք վերև:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՅՈՎՍԷՓԵԱՆ
Էրմիւսի, 1932

Վ. Ե. Զ.

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԱՐԱՋ Տարեգիրք, Ա. Տարի 1933. Ծ. Հ. Սիրունի: Պուրէ, էջ 272, գիւ 1.50 օպուր:

«Արաջ» Տարեգիրքը, իր բովանդակութեամբ ու նկարագրով, որոշ չափերով կը տարբերի իր նմաններէն, և իր արժէքը՝ մասամբ իր այդ ինքնուրոյնութեան մէջն է: Միւս տարեգիրքերը մեզի կը բերեն առհասարակ ներկայ տարեշրջանի, գրական, գեղարուեստական, և մտաւոր իրադարձութիւններուն հարուստ մէկ ամփոփոյքը, մինչդեռ վերոյիշեալը, մեզի կը պատմէ Ռուսմանահայ գաղութին անցեալ և արդի կեանքը, իր անձերու և անցքերու յիշատակներովը, որոնք պատմութեան խուզարկուին համար լոյսեր՝ և տոհմասէր հոգիներուն սիրելի յուշեր կը հայթայթեն: Ուրախ ենք ըսելու որ տարեգիրքը իր յառաջադրած խիստ գովելի, և քաջալերուելու արժանի նպատակին մէջ լայն չափերով յաջողած է. և Յ. Ճ. Սիրունի որ կնքահայրը եղած է այս ձեռնարկին, եթէ ներուի մեզի այս բառով որակելու իր գերը, կրնայ իր արդիւնաւոր ճիւղերուն եթէ ոչ նիւթական՝ գոնէ բարոյական յաջողութեամբ մխիթարուիլ:

Դործին գլխաւոր արժէքը ինչպէս ակնարկեցինք, իր պատմութեան յուշագիր մ'ըլլալու հանգամանքին մէջն է. իրր յիշատակարան համայնքի մը, որ չարաբաստօր մը, զժողակ պարագաներու հարկադրանքին ներքեւ թողլքած իր մայրենի հողը, գացեր է օտար աստղերու տակ որոնելու իր բախտը: Հայ գաղութներու պատմութիւնը մեր ազգային պատմութեան երկրորդ կէտն է, առանց որուն չ'ամբողջանար առաջինը: Հետեւաբար վտարանդի այդ բեկորներուն անցեալ կեանքը, լրացուցիչ մէկ մասնիկն է ամբողջ ցեղին պատմութեան, որուն շատ մը զժախտութիւններէն մէկն ալ իր ծոցածին դուստներուն այդ կերպով կորսուիլն է:

«Արաջ» Տարեգիրքը, որ աւելի ճիշտ պիտի ըլլար թերևս Ռուսմանահայ յուշագիրք յորջորջել, կը բացուի Ս. Խաչատուրեանի արարատի նկարով. որուն կը յա-

ջորդէ Հայ յայտնի գրողներու պատկերաւարքը, որոնց իւրաքանչիւրին գրական արդիւնքէն պատառիկ մը կը բարացուցէ անձնիւր գրողը իր սեփական մէջ: Գրական մշակներու այդ աւագումը կը լրանայ Ս. Բիւրքճեանի (Հայուհին իր օճախին մէջ), Փ. Թէրլէմէզեանի (Կոմիտաս վրդ.) և Մ. Սարեանի (Երեկոյ Արդունի մէջ), գեղեցիկ պատկերներով, որոնք դրասանգուած դարպասի մը երեւոյթով տարեգիրքի էջերէն ներս կ'առաջնորդեն ընթերցողը:

Ամբողջ հատորը երեք գլխաւոր մասերու կարելի է բաժնել 1. Սերմեր օտար հողի վրայ. 2. Հայ հետքեր Ռուսիոյ երկրին մէջ, և 3. Ռուսմանահայ քրոնիկոն: Առաջին մասին մէջ կը բովանդակուի Ռուսմանահայ գաղութին քանի մը կարկառուն գէմքերուն կեանքն ու գործունէութիւնը, որոնք իրենց պատկանած ցեղին բարոյանիշերով հարուստ՝ փառքն ու պարծանքը եղած են նաև իրենց բնակած երկրին: Գր. Պըլլազլուին մին է Ռուսմանահայ պարծանքներէն, որուն՝ Մինաս Թոխաթեցիի զրածողին յառաջաբանը, որ նոյն ատեն ամփոփումն է ամբողջ գրութեան, շահեկան յօդուածներէն մին է տարեգիրքին: Ուշագրաւ է նաև նոյն խորագրին տակ Յ. Ճ. Սիրունիի Մ. Էմինէսքուի քերթուածներուն խիստ յաջող թարգմանութիւնը, գրեթէ միակ մթերքը տարեգրքի գրական բաժինին, որոնց մէկ մասը հրատարակուած է արդէն անցեալ տարուան Անահիտին մէջ: Կարծէ յիշել նաև հայազգի Գր. Թրանքու Նաշը (ծն. 1873), և Իօն Փէթրէսքուն (1851-1932), մին պետական մարդ և հեղինակ, և միւսը հռչակաւոր գերասան, որոնք զիրենք երկնող ցեղին հանճարն են ցուցադրեր օտար հողի վրայ:

Երկրորդ մասին մէջ վեր հանուած են հայ ստեղծագործ միտքին նմոյշները Ռուսիոյ ճարտարապետութեան ու մշակոյթին մէջ, որ ամենէն արժէքաւոր ու հետաքրքրական բաժինն է տարեգիրքին: Նշանակալից են Ն. Եօնկայի, «Հայեր Ռուսիոյ պատմութեան մէջ», Պօկտան Հաթաեւի «Արճէլի վանքը», և մանաւանդ Կէօրկէ Պալլի «Հայ և Վրացական ազգեցութիւններ Ռուսիոյ ճարտարապետութեան վրայ», պատմական ու բանասիրական երեք յօդուածները, ուր Ռուսիոյ այս պարկեշտ

գիտնականները մանրամասնօրէն թուարկած են հայ արուեստի այդ մարդին մէջ յայտնագործած գեղեցիկութիւնները Ռուսիոյ ասպնջական հողին վրայ:

Հանդէսին երրորդ մասը կը կազմեն Ռուսմանահայ Քրոնիկոն (967-1600) խորագրին ներքեւ պատմական անձերու և զէպքերու յիշատակարանաձև պատմական նշմարները, որ ամենէն աշխատուած ու շահեկան մասերէն մին է գործին:

Վերոյիշեալ երեք գլուխները կ'ամբողջանան, «Ինչպէս հիմնուեցաւ Ռուսմանահայ թեմը», «Թեմն և իր Համայնքները», և ուրիշ այլազան գրութիւններով, որոնք իրենց կարգին տարեգիրքի մը կազմիչ մասերն ըլլալով զայն իր գերին սահմանուած գործ մը կը դարձնեն:

Պատկերագիրք, մաքուր, և խնամալ ապագրութեամբ հատոր մըն է Արագ Տարեգիրքը, որուն գլխաւոր արժանիքը ինչպէս ըսինք, առաւելագէտ իր Ռուսմանահայ պատմութեան յուշագիրք մ'ըլլալուն մէջն է:

Ե. ԱՅՂ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

ԽՈՐՀՈՒՐԳ ԵՒ ԽՕՍԳ

Որքան ալ մեծ լինի աւանդութեանց, հաստատութեանց, և ճնշակաւ պայմաններու ազդեցութիւնը, որոշարեւոյ հաւար ազգի մը կեանքի ընթացքը և յաջողութիւնը կամ ձախողութիւնը, ժողովուրդին բնածին յատկութիւնները պիտի զգացնեն իրենց զիրենց, և, ի վերջոյ, պիտի կասարեւ գերակշիռ ազդեցութիւն մը միւս բոլոր ազդեցութիւններուն վրայ:

*

Պարսիկն ունենալ անողջ յարգանք մը մեր պատմականներուն հանդէպ: Ո՞ր գիտէ զուցէ ականք հեզհեզ իրենց զիրենց հաւասար կացութեան այսօրուան մարդոց: Երբոր ականք հասնին քառասուն կամ յիսուն տարեկան տղանց գերագանց հանդիսակալու՝ այն ատեն միայն պիտի չունինք այնքաւ լիախալու ականքով:

*

Արեւնոյ խիղճը, լուսաւորելով զայն Աստուծոյ զգացումովը: Այս և կենդանի քառագոյնեան նպասակը. ու ասոր կրնայ հասնիլ կեանքին ծնած կենդանի խօսքը միայն:

“ԼՈՒՍԱՒԱՐՈՐԶԻ ԼՈՒՄԱՆ”

ԿՈԶ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ

Սիրեցեալ եւ պատուական ժողովուրդ Մեր Ի Տէր,

Երբ շուրջ տասն ամիսներ առաջ, Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութիւնը կատարուեցաւ Ս. Էջմիածին, այնքան բարեկամօրէն պայմաններու մէջ եւ այնչափ գոհացուցիչ արդիւնքով, ամէնքս ազգովին երջանիկ զգացինք ինքզինքնիս, խորհելով թէ թանձր ամպ մըն էր որ փարատեցաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ վրայէն, ու փառք տուինք Աստուծոյ. իսկ երբ, այսօր, կարդացուեցաւ Ն. Ս. Օծութեան նորընտիր Հայրապետին օրհնութեան տնդրանիկ սրբատառ Կոնդակը, անգամ մը եւս շեշտուեցաւ եւ նորոգուեցաւ մեր ուրախութիւնը, ազգին հոգեւոր Հայրապետին ողջոյնին մէջ լսելով Հայութեան սիրելի հայրենիքին եւ անոր նահատակ Եկեղեցիին նուիրական ձայնը ինքնին:

Այս երկու առիթներով մեր զգացած բերկրանքը, որքան ալ արդար եւ բարի, պէտք չէ սակայն անտեսել տայ մեզի այն տխուր իրականութիւնը, որ կը ճնշէ այսօր Ս. Էջմիածնի վրայ, պատերազմէն վերջը աշխարհի ամէն կողմերը երևան եկած տնտեսական տաղնապին հետեանքով ընդհանրապէս, եւ մասնաւորաբար՝ Հայաստանի մէջ այժմ գոյութիւն ունեցող պետական այն իրաւակարգին պատճառաւ, որ կրօնական հաստատութեանց նիւթական հոգն ու խնամքը, որ եւ է ատենէ աւելի խիստ կերպով, հաւատացեալներուն խղճին եւ սրտին կը յանձնէ:

Ն. Ս. Օծութիւն, Վեհափառ Սրբազան Հայրապետը, փափկանկատօրէն անշուշտ, իր առաջին Կոնդակին մէջ չէ ուզած որոշ կերպով խօսիլ այդ մասին, բայց նախապէս ստացուած պաշտօնական տեղեկութիւններէ եւ ցայժմ առնուած մասնաւոր տեղեկութիւններէ գիտենք մենք եւ գիտէ ամէն ոք թէ Հայաստանեայց Եկեղեցւոյ Մայր Աթոռը նիւթական տաժանելի դրութեան է ենթարկուած: Մեծ տաղնապը ամբողջովին ոչնչացուցած է զբաժանուածներու մէջ անոր ունեցած արժեթղթային եւ հնչուն հարստութիւնը. նոր օրէնքը զրկած է զինքը կալուածական եւ եկամտային իր բոլոր առաւելութիւններէն. եւ ինչ որ կը մնայ այսօր ազգին հոգեւոր իշխանութեան կեդրոնական իշխանութեան տրամադրութեան տակ, ամենահամեստ եւ, զնենք բուն բառը, աղքատիկ ապրուստի մը տկար միջոցն է լոկ. այնպէս որ Վեհափառ Սրբազան Կաթողիկոսը, Հայրապետն Ամենայն Հայոց, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը եւ միաբանութիւնն Մայր Աթոռոյ ի վիճակի չեն այսօր հոգեւորականաց կրթութեան, պաշտօնաթերթի հրատարակութեան եւ հայրապետական իշխանութեան վերաբերեալ նման կարիքներու գոհացում տալու, մի միայն տնտեսական աննախընթաց դժուարութիւններու երեսէն:

Իրաց այս կացութեան մէջ, ինչպէս Հայաստանի ներկայ իրաւակարգը կը հարկադրէ, եւ, ինչպէս անկէ առաջ մեր խիղճն ու սիրտն է նոյն իսկ որ կը հրամայեն մեզի, մեր պարտականութիւնն է փութալ որդիարար օգնութեան ձեռք կարկառել ամենուս պատուական եւ մեծարելի Մօրը, կանգուն պահելու համար մեր հաւատքին դարաւոր Տունը, մեր Եկեղեցւոյ կեդրոնական սիւնը, Էջմիածինը, եթէ ոչ՝ իրեն վերագարձնելու համար իր նախկին ճոխ կեանքը եւ հարուստ գիւրութիւնները, այլ գոնէ մասամբ ամփոքելու համար իր տաժանքը, եւ որպէսզի քիչ մը աւելի լայն պայմաններու մէջ գործադրել կարենայ իր պաշտօնն ու պարտքը հանդէպ իր հօտին, այսինքն լրութեան ազգին:

Բայց որովհետեւ աշխարհի ներկայ վիճակին եւ ազգին այժմեան դրութեան մէջ անկարելի էր խորհիլ մեծագումար նպաստներու վրայ, հարկ էր գտնել գէթ այնպիսի կերպ մը, որով հնար լինէր թէ՛ առիթ տալ ամէն անձի՝ կատարել իր պարտականութիւնը Ս. Էջմիածնի վերաբերմամբ, եւ թէ՛ պատեհութիւն ընծայել Մայր Աթոռոյ՝ որպէսզի կարենայ շօշափելի չափով մը վայելել իր զաւակներէն իրեն ընձեռուած միութարութեան մը արդիւնքը:

Արդ, այս մասին մեր նախկին փորձառութեան տուիքները և ներկայ պարագայից հանդամանքները ունենալով ի նկատի, ամենէն պատշաճ կերպը թուեցաւ մեզի հաստատումը Լուսաւորչի լուսնայ կոչուած տարեկան տուրքի մը, զոր կամաւորապէս վճարէ Հայաստանեայց եկեղեցւոյ ամէն չափահաս զաւակ, այլ թէ կին, 5 դահեկանի կամ մէկ չիլիւնի նուագագոյն սակի մը վրայ հիմնուելով:

Մեր այս տեսութիւնը հաճոյ ևս գործնական թուելով Սուրբ Աթոռոյս Վարչական Մարմնոյն, Պատ. Տնօրէն Ժողովին, որոշմամբ արձանագրուեցաւ անոր ընդունելութիւնը իր վերջին նիստին մէջ, ինչ որ մենք ևս մեր Պատրիարքական իշխանութեամբ հաստատելով՝ այս գրութեամբ կը հրատարակենք ի լուր մեր վիճակի և շրջանակի Հայութեան, անոր գործադրութիւնը յանձնարարելով ազգային և եկեղեցական Մարմնոց և պաշտօնատարաց հոգածութեան, որպէսզի երբ մեր կողմէ կարգուած Հաւաքիչներ, Միաբանութեանս հոգևորական անդամներէն և պատ. աշխարհական ազգայիններէ, ներկայանան Ժողովրդեան, ընդունելին պատրաստակամ սիրոյ յօժարութեամբ:

«Եկայի՛ք շինեսցուք սուրբ զխորանք լուսոյ», — Եկէ՛ք շինենք լոյսին սուրբ խորանը — կ'երգէ եկեղեցւոյ քնարը:

Որ և է ժամանակէ աւելի ներկայիս համար կարծես արժէք ունի հրաւերի այս երգը: Այն սուրբ յարկը, որուն ներքեւ աւելի քան տասնեւեց դարեր առաջ մեր կեանքին վրայ ծագեց Աւետարանի լոյսը, չար բախտին և արտակարգ պարագաներու բերումով այնպիսի վիճակի մը մատնուած է որ անհրաժեշտութիւն կայ որպէսզի ամբողջ Հայութիւնը սիրտ սիրտի մօտեցուցած և ձեռք ձեռքի խառնելով, անոր շինութեանը համար ընէ իր կարելին:

Լուսաւորչին լուսնայ կը հաւատանք թէ այս մասին պիտի լինի ճշմարիտ օրհնութիւն մը Ս. Էջմիածնի համար, եթէ ամէնքս սիրով և սիրտով ձգենք զայն յանուն մեր Հաւատքին ճորը մեզի ներկայացուած գանձանակին մէջ:

Կոչ կ'ուղղեմ մեր Պատրիարքական շրջանակի բովանդակ Հայ Ժողովուրդին, ընդունիլ սահմանուած այս տարեկան տուրքը և գործադրել զայն այս տարիէն սկսեալ, համաձայն այն եղանակին, որ պիտի հրատարակուի ամէն տարի, իսկ այս տարի պիտի հաղորդուի ամէնուն՝ ժապաւինեալ տոմար ի ձեռին ներկայացող հոգեւորիկ Միաբան Հայրերու և իրենց ընկերացող պատ. ազգայիններու միջոցաւ:

Ըստ եկեղեցական կանոնաց, իրաւունք չենք զգար անշուշտ մեզի՝ սոյն կոչը ուղղելու Պատրիարքութեանս շրջանակէն արտաքոյ եղող, հեռաւոր ևս մերձաւոր հայ վիճակաց, բայց կը թելադրենք սիրով և կը խնդրենք ամէնուն ևս հոգեւոր և ազգային վարչութիւններէն ալ, կամ այս կերպով և կամ որ և է ուրիշ լաւագոյն եղանակաւ կատարել Մայր-Աթոռոյ օգնութեան հասնելու անյետաձգելի պարտականութիւնը, իբրեւ մեր ազգային և եկեղեցական անհրաժեշտ պարտականութիւններէն մին:

Հաճոյքով և մխիթարութեամբ կը տեսնենք թէ, հակառակ ամէն տեսակետով անձկութեան վիճակին, ուր կ'ապրինք ամէնքս ալ, ընդհանուր ջանք և փափաք կայ հասնելու միշտ բոլոր պէտքերուն՝ որոնք յառաջ կուգան մեր ազգային կեանքին մէջ. այդ պէտքերուն սակաւաթիւ առաջիններուն գիծին վրայ և նոյն իսկ առաջին պարտինք գասել Լուսաւորչի լուսնայ:

«Եկայք շինեսցուք»ը հարկ է որ արձագանգէ ամէն Հայու սիրտին մէջ. պէտք է թոյլ տանք որ կործանի մեր մէջ այն զօրութիւնը, որ մեր հոգեւոր շինութեան և կազմակերպութեան պատճառ ևս ազգակ եղաւ, մեր հոգեկան կեանքի խաւարին վրայ ծագելով փրկարար ճշմարտութեան լոյսն օր Հայաստան աշխարհիս:

Երկնաւոր Քահանայապետն Յիսուս Քրիստոս թող շնորհէ որ անշէջ նշուէ ընդ միշտ այդ լոյսը, և անոր առաջին խորանն ի մեզ, Ս. Էջմիածին, մնայ ի հաստատութեան և ի պայծառութեան, ի փառս Աստուծոյ բարձրելոյ և ի մխիթարութիւն ազգիս սիրելոյ:

Ողջո՛յն սիրոյ ամէնուգ՝ ի ծառայէս Աստուծոյ, և օրհնութիւն յամենայն սրբաբառեղեաց սրբոյ քաղաքիս և ի Սրբոյ Առաքելական Աթոռէս:

24 Սեպտ. 1933
Ի Վանս Սրբոց Յակօբեանց
ԵՐՈՒՍԱԿԷՄ

ԱՂԹԱՐԱՐ
ՊԱՏՐԻԱՐԷ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ
ԹՈՐՈՒՈՒՄ ԱՐԲԵՊԻՍԿԱՊՈՍ

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

Անցեալ սեպտեմբեր ամսոյ ընթացքին Ս. Աթոռոյ Տնօրէն ժողովը, Կրօնական Առեւտրի և Առուսման Խորհուրդը ունեցան իրենց օրինական գումարումները:

Տնօրէն ժողովը, բացի ընթացիկ գործերէն, մասնաւորապէս զբաղեցաւ նոր պլոքի ձեռնարկուած շինութեանց և յաջորդաբար շինութիւնքին գործերով, ինչպէս նաև Մայրապետաց կոչուած վանապետի գետնի խնդիրներով:

Տնօրէն ժողովը, ընդ առաջ երթալով Սրբազան Պատրիարք Հօր առաջարկութեան, որոշեց եւ սահմանեց որ յետ այսու երեսուցէթի Պատրիարքութեան շրջանակին մէջ ապրող Հայաստանաց Ս. Եկեղեցւոյ պատկանող ամէն չափահաս ազգային, առ նուազն մէկ շինին տարեկան տուրք մը վճարէ յօգուտ Ս. Էջմիածնի, իրեն «Լուսաւորչի լուսնայ»: Ըստ այսմ որոշուեցաւ այժմէն գործադրել այս տնօրինութիւնը, որուն համար Սրբազան Պատրիարք Հայրը հրապարակեց այս առթիւ Պատրիարքութեան Թեմի ժողովուրդին ուղղուած «Կոչ» մը:

Իսկ Առուսման Խորհուրդը մասնաւորապէս զբաղեցաւ վարժարաններու վերաբացման եւ Սրբոյ Թարգմանչաց-Գուրեան Գրական Մրցանակի և Ս. Աթոռոյ տպարանին հարկերամիայ յօրեւանի հարցերով:

Շր. 2 սեպտ. — Տ. Գարեգին Վրդ., ընկերակցութեամբ Բարգէն Սարկուազի, մեկնեցաւ Ամման, վերափոխման ութօրէքի առթիւ պատարագելու և քարոզելու համար:

Վր. 3 սեպտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան տաճարի հայկական վերնաշարի մատուցելու Երաշխաւոր Ս. Աստուածածնի սեղանին վրայ: Քարոզեց Տ. Հայկազուն Վրդ., վեր առնելով «Սուրբ սրտի և ուղղադատ հոգի» կատարած գերը մեր կեանքին մէջ:

Ս. Պատրիարքը այս առաւօտ գնաց Բեթլեհէմ, և ներկայ գտնուելով Ս. Այրին վրայ մատուցուած Ս. Պատարագին, քարոզեց օրուան և տեղւոյն քրիստոնէական խորհուրդին վրայ:

Բշ. 4 սեպտ. — Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ Տ. Կիւրեղ Վրդ.-ի, բարի գալստեան այցելութիւն տուաւ պետական բարձրագոյն պաշտօնատար Չիֆ սըքրէթրի Mr. J. Hall-ի:

Տ. Սմբատ Սրբազան, ընկերակցութեամբ Պ. Նուրեանի, կառավարչատուն գնաց, Յօպպէի հին գերեզմանատան կից թափուր գետնի մասին՝ վարձատուութեան համար տեղւոյն մաքսային վարչութիւնէն եղած առաջարկին մասին բանակցելու համար:

Գշ. 5 սեպտ. — Տնօրէն ժողով և Առուսման Խորհուրդ այսօր Ս. Պատրիարքին հետ հանգիստի օր մը անցուցին ի Գարուն-Տէր:

Եշ. 7 սեպտ. — Ս. Պատրիարք Հօր այցելեց Հապէշներու հոգեւոր Տեսուչը, խնդրելու համար որ նոր ստացուելիք գերեզմանատան առթիւ անկատ լծողութի իրենց պարագան:

Ուր. 8 սեպտ. — Տեղւոյն օսմ. պանքայի տնօրէն Աղն. Պ. Լեւոն Գէորգեան երախտապարտ թողած է ամբողջ Միաբանութիւն, այսօրուրէն սկսեալ ստանձնելով Ս. Աթոռոյ ելեմտից գիււանին վրայ վերահսկողի և ֆինիլի պատուակալ պաշտօն մը, որ վստահ ենք թէ մեծապէս օգտակար պիտի լինի Հաստատութեան համար:

Գանձատան Յանձնախումբի անդամներէն Տ. Յարութիւն վրդ. ձերութեան պատահաւ ժամանակէ մը ի վեր իր պաշտօնը վարելու անկարող դարձած ըլլալով իր տեղ նոր անդամ ընտրուեցաւ Տ. Կիւրեղ վրդ.:

ՇԲ. 9 սեպտ. — Ս. Պատրիարքը, Տ. Մեսրոպ և Տ. Սմբատ սրբազաններու ընկերակցութեամբ շնորհակալութեան և շնորհաւորութեան այցելութիւն տուաւ Աղն. Պ. Լեւոն Գէորգեանի, իր տան մէջ:

Կիր. 10 սեպտ. — Գիւտ Գօտեայ տօնին առթիւ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Կուսին գերեզմանին վրայ ի Գեթսեմանի, ուր քարոզեց Տ. Նորայր վրդ., օրուան ծառ Աւետարանի ընթերցուածն առնելով իրեն նիւթ (Միկ. Դ. 35-40), և մատնանիշ ըրաւ երկու հոգեւոր ճշմարտութիւններ. թէ՛ Աստուծոյ նախախնամութեան վրայ հաւատքը հեռու կը վանէ վախը մարդու սրտէն, եւ, երբ Քրիստոս մեզի հետ է եւ մենք Քրիստոսի հետ՝ մեր կեանքի նաւակը չ'ընկղմիր մեղքերով ալեկոծ աշխարհի ծովուն վրայ:

Բշ. 11 սեպտ. - Գշ. 12 սեպտ. — Մեծ եռանգով կը շարունակուի Գրագրաց Մատենադարանի ձեռագրաց յիշատակարաններու ընդօրինակութեան գործը. ցարդ աւարտեցաւ 2000 զըրչագիրներու ընթութիւնը. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ, օգտուելով արձակուրդի պատեհութենէն, շարաթը երեք անգամ, ցերեկ և գիշեր ի միասին կ'աշխատին միաբաններ և աշակերտներ:

Եշ. 14 սեպտ. — Իրադի ողբացեալ Ֆէյսալ թագաւորի մահուան առթիւ Ս. Պատրիարք Հայրը ցաւակցական հեռագիր տուաւ Անդրյորդանանի վեհապետ Էմիր Ապտուլլահի, որմէ ստացաւ շնորհակալեաց պատասխան հեռագիր:

Ուր. 15 սեպտ. — Պետական բարձրագոյն պաշտօնատար Չիֆ սըքրէթրի փոխադարձ այցելութեան եկաւ Ս. Պատրիարք Հօր, ընկերակցութեամբ Բարձր Գոմիսարութեան պաշտօնակալ Բուհի Պէյի:

Մայրապետաց զեռնի վաճառման գործով զբաղող Նոր Շինութեանց Յանձնախումբին վրայ աւելցուեցաւ նաեւ Տ. Նորայր վրդ., վերոյիշեալ հոգին վաճառման աշխատութեանց միայն մասնակցելու պաշտօնով:

Շր. 16 սեպտ. — Երեք օրուան կարճ հանգիստի մը համար, Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Տ. Սմբատ Սրբազանի և Տ. Եղիշէ Արեղայի, պտոյտի ելաւ դէպի Գալիլիա, ի նախապարհին այցելելով Սիւքէմ՝ Յակոբայ ջըհորը, Նային, Թափօր լեռը, Կանա, Տիբերիա, Գեննե-սարէթի ծովուն հարաւային ծոցը՝ Սամախ Երկու գիշեր օթեանեցան զերմանական Թապղա հիւրանոցը, մերձ ի Տիբերիա, և երկու ցերեկ ջըջեցան Փրկչին գալիլիական գործունէութեան կեդրոնական ջըջանակի աւերակները. Կափառ-նառմի, Մագլիթաղիէի, Բեթսայիդայի, Քորազինի աւերակները, հացերու հրաշալի-բաղձացման և Երանութեանց լերան սարահարթերը, և Բշ. 18 սեպտ. դարձան Երուսաղէմ, այս անգամ այցելելով յատկապէս Նաղարէթի Ս. Կուսին Աւետման վանքը, սուրբ ընտանիքին տունը եւ Ս. Յովսէփի աշխատանոցը, որուն վրայ այժմ եկեղեցի կառուցած են Ֆրանչիսկեանք:

Կիր. 17 սեպտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան տաճարի հայկական Գողթթա մատրան մէջ. քարոզեց Տ. Սեբօլքէ վրդ., խօսելով աղօթքի վրայ՝ բացատրեց թէ հոգիի փրկութեան ամենէն վսեմ միջոցներէն մին է ան. Ե. ծանրացաւ մասնաւորապէս այն կէտին վրայ թէ անոր իմացումը ներհակ չէ բռնաւ տիեզերական օրէնքի գաղափարին, քանի որ ինքն իսկ մէկ մասն է հոգեկան կեանքին, որուն բացատրութիւնը ընդգէմ չէ բնաւ տիեզերական կեանքը վարող սկզբունքին:

Գշ. 19 սեպտ. — Թղթատարութենէն այսօր ստացուելով վեհ. Սրբազան Հայրապետին անդրանիկ կոնդակը, Ս. Պատրիարքը իսկոյն հրաւիրեց եպիսկոպոսաց դասը և Տնօրէն Ժողովը, եւ կարգադրութիւններ եղան յառաջիկայ կիրակի զայն կարգալու համար հանդիսաւոր կերպով:

Տնօրէն Ժողովոյ որոշմամբ Մատակարարական Յանձնախումբի ներկայ անդամներուն վրայ աւելցուեցաւ Տ. Նորայր վարդապետ:

Եշ. 21 սեպտ. — Ս. Աստուածածնի ծննդեան տօնին առթիւ, այսօր, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր, Միաբանութիւնը «Հրաշափառքով մուտ գործեց Գեթսեմանի, Աստուածածնի զերեզմանի տաճարը: Հանդիսիւ պատարագեց Տ. Մկրտիչ Սրբազան Աղաւնունի, որ եւ քարոզեց «Մայր իմ եւ եղբարք իմ սոքա են, որ զբան Աստուծոյ լսեն եւ առնեն» բնաբանով, բացատրելով թէ արիւնէ աւելի հոգւոյ կցօր-դութեան մէջ է ընդ Յիսուսի յարաբերութեան

արժանիքը, եւ թէ Փրկչին մօր մեծութիւնը իր բարոյական առաքինութեանց մէջ է մասնաւոր:

Եթովպիոյ հիւպատոսը, Պ. Աթօ Պաւլոս Մէնամէնօ, այցելեց Ս. Պատրիարք Հօր և ծանոյց թէ վեհ. Կայսրուհին Ս. Քաղաք պիտի ժամանէ ամսոյս 25ին, երկուշաբթի:

Ս. Պատրիարքը, Տ. Բարթողիմէոս Ե. վրդ. ի և Տ. Եղիշէ Արեղայի ընկերակցութեամբ այցելեց ի Պիթի արձակուրդի դացած աշակերտներուն, եւ միասին ճաշեց մօտակայքը, վարդ-աղբիւր կողուած տեղւոյն ձիթատաններու պարտէզին մէջ:

Իրիկնադէմին, Ս. Յակոբայ տաճարին ի տես եկաւ և յետոյ Ս. Պատրիարքին այցելեց ամերիկեան հիւպատոսը և ընդունեց Ն. Ամնապատուութեան թէյի մեծարանքը:

Ուր. 22 սեպտ. — Ս. Պատրիարքին այցելեց Երուսաղէմի փոխ-կառավարից Մր. Սիւլմէն, ընկերակցութեամբ Լոնտոնէն ժամանած ճարտարապետի մը, որ պաշտօն ունի կառավարութեան կողմէ քննութեան ենթարկելու Ս. Յարութեան և Բեթղէնէմի Ս. Ծննդեան տաճարներուն շինուածական ներկայ կացութիւնը:

Շր. 23 սեպտ. — Ս. Պատրիարքը, Պ. Նուրեհանի ընկերակցութեամբ, փոխադարձ այցելութիւն տուաւ փոխ-կառավարից Մր. Սիւլմանի:

Պիթի արձակուրդի դացած սարկաւադներ և ժառանգաւորներ այսօր վերջնապէս դարձան, իրենց Տեսուչ Տ. Տիրան վրդ. ի հետ:

Կիր. 24 սեպտ. — Խաչվերացի տօնին առթիւ, Ս. Պատրիարքը Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պատարագեց հանդիսիւ «Հայր մեր՝ ատեն, ի ժամ պատարագի, Լուսարարպետ Տ. Միսրոպ Սրբազան բեմէն ի լուր ժողովրդեան կարգաց հայրապետական կոնդակը. ապա քարոզեց Ս. Պատրիարքը, խաչի տօնին և կոնդակին ընթերցման այս հանդիպումը գտնելով խորհրդաւոր, մերձեցումի կէտեր ցոյց տուաւ երկուքին միջեւ. Ս. Հայրապետին խօսքին մէջ մատնանիչ ըրաւ խաչի ճառին ոգին, իբրեւ խաչի երկրէն՝ այսինքն յետ այնքան տառապանքներու դարձեալ կենդանի մնացած և իր ապագային հաւատքովը հօր ժողովուրդի մը սրտէն ելած զօրութեան մը հաւատօթիքը:

Երեկոյին կատարուեցաւ Խաչվերացի մեծահանդէս անդաստանը, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր, և մասնակցութեամբ բովանդակ Միաբանութեան:

Բշ. 25 սեպտ. — Խաչվերացի մեծեղոցի առթիւ, Ս. Պատարագը, ըստ սովորութեան, մատուցուեցաւ ի Ս. Փրկչի. քարոզեց Տ. Շաւարշ վրդ. բացատրեց թէ խաչը, թէ և գործիք մահու, բայց անմահութեան գաղափարն է որ կը

պանծացնէ իսկապէս. ըստ այսմ. և խաչին հո-
վանիին ներքե իր վերջին հանդիսը գտնելը կը
նշանակէ ժառանգակից լինել Գրիստոսի յարու-
թեան. ընդլայնեց այս մտածումէն ըզխող մխի-
թարութեան միտքը, իբրեւ անոր կիրարկութեան
զաշտ մատնանշելով ի մասնաւորի՝ ճշմարիտ հա-
ւատացեալին, և յընդհանուրն՝ մեր ազգային
կեանքը:

Յ. Գշ. 26 սեպտ. — Ս. Պատրիարքը, ուրիշ
հոգեւոր պետերու, կառավարական բարձր պաշ-
տօնեաներու և հիւպատոսական մարմիններէ հետ,
այս առաւօտ ներկայ գտնուեցաւ կայսրանը,
ընդ առաջ Եթովպիոյ կայսրուհի Ն. Վ. Ուաղըրի
Մէնէնի, որ մեծ յարգանքով ընդունուեցաւ
բոլոր ներկաներէն ևս զինուորական իշխանու-
թիւնէն: Ճանապարհին կէսին, զիմաւորուեցաւ
Հապէշ ևս Ղպտի կրօնական զաւէն, որոնք
հանդիսաւոր թափօր կազմեցին ևս հոգեւոր եր-
գերով առաջնորդեցին զայն, իր հետեւորդնե-
րով, զէպի Ս. Յարութիւն: Հոն, Ս. Յակոբ-
նանց Միաբանութենէն 20 անդամներ, ի գլուխ
իրենց ունենալով Լուսարարապետ Տ. Մեսրոպ
Սրբազանը, գրեթէ նոյնքան նաև յոյն միաբան-
ներէն՝ գլխաւորութեամբ Ֆիլատէլֆիոյ արք-
եպիսկոպոսին, ինչպէս և լատին հոգեւորական-
ներ՝ Գրանշիսկեան միաբանութենէն, լուս բայց
պատկառաղջօ հանդիսաւորութեամբ ընդունե-
ցին կայսրուհին ևս երկու զաւակները, որոնք
նախ Պատանատեղիի վէմին վրայ, յետոյ ի Ս.
Գողգոթայ, ապա Ս. Գերեզմանին վրայ, ի վերջոյ
Ղպտիներու մատրան մէջ և ամենէն ետքը Գլխա-
թաչի և մեր Ս. Լուսաւորիչ եկեղեցիի խորանին
առջև ջերմօրէն կատարեցին իրենց ուխ-
տը, ևս ապա Հապէշ կրօնաւորներու առաջնոր-
դութեամբ, զացին իրենց եկեղեցիին:

Յ. Եշ. 28 սեպտ. — Ն. Վ. Եթովպիոյ կայ-
սրուհին այցելեց Բեթղեհէմ ևս Գեթսեմանի.
երկու սրբալայրերուն մէջ ալ Հայ և Յոյն միա-
բաններէն ընդունուեցաւ պատուով: Տ. Մկրտիչ
Սրբազան Աղաւնունի, երկու ուխտալայրերու
մէջ ևս զլիսաւորեց իր միաբանակից Հայերը,
յանուն Ս. Պատրիարքին օրհնութեան և մաղ-
թանաց ողջոյն նուիրելով Վեհ. այցելութիւն:

Յ. Շր. 30 սեպտ. — Ս. Խաչի վերադման տօ-
նի ութօրեքին առթիւ, ինչպէս նաև Ամենայն
Հայոց Ս. Հայրապետի անդրանիկ կոնդակը կար-
գալու և «Լուսաւորչի լուսմայ» տուրքը ծանու-
ցանելու ևս զանձնու պաշտօնով, Յօպէ մեկ-
նեցան Տ. Ներսէս և Տ. Սիւրբ վարդապետներ.
Հայֆա՝ Տ. Պարգե և Տ. Շաւարշ վարդապետներ.
Ամման՝ Տ. Սերովբէ վրդ. և կարապետ սարկա-
ւազ:

— Իսկ երունաղէմի մէջ «Լուսաւորչի լու-
մայ» ի հանգանակութիւնը կատարելու գործը
յանձնուեցաւ երեք յանձնախումբերու:

Ա. — Վանքի շրջափակէն ներս. անդամներ. —

Տ. Սերովբէ վրդ. Մանուկեան,

Տ. Հայրիկ արդ. Ասլանեան,

Պ. Գրիգոր Մխալեան:

Բ. — Քաղաքի պարիսպէն ներս. անդամներ. —

Տ. Վահան վրդ. Գեորգեան,

Տ. Հայկազուն վրդ. Աբրահամեան,


Պ. Յակոբ Սահակեան:

Գ. — Քաղաքի պարիսպէն դուրս. անդամներ. —

Տ. Նորայր վրդ. Պողարեան,

Տ. Գարեգին վրդ. Պիւլպիւլեան,

Պ. Յովսէփ Շէօհմէլեան:



ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ կ'արձանագրենք հետեւելու նուե-
րներ:

Բարեպաշտական

Երուսաղէմարեակ Այնթապի Տիկ. Նուրիցա Կե-
սիկեան նուիրած է ինքնաձեռագործ երկու Սեղանի
մարմնակալ:

Նոյնպէս եղեսացի Այնթապի Թաւանեան՝
մէկ զոյգ ժամաւարի ձեռագործ հողաքաւի:

Դրամական զանազան նուէրներ դրկած են բարե-
պաշտ ազգայիններ, Պրոֆիլենց, Նիւտրէնց, Գանի-
րէնց, ինչպէս նաև Երուսաղէմէն:

Մէկմէկ մասաղ ոչխար ընծայած են Գանիբէրեակ
Տիկ. Մաւրի Բամպուրեան (ուխտաւոր), Երուսաղե-
մացի Տիւր Բարսիլիս Պապիկեան և Տիւր Բակըր
Տիգրանեան:

Մասնադարձակ

1. — ՄԵՂԵԳԻՆԵՐ, ՄԵՂԵԳԻՆԵՐ . . . (Հէֆեաթ
և Բանաստեղծութիւն). Շաւարշ Նարդուցի, Փարիզ,
1933, էջ 218, գլխ 15 մր.: — Մասնաւոր «Յաւաշ»
թիւ 1:

2. — ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔԻ ՀԻՆ ԱԶԳԵ-
ՐՈՒ. (Պատկերազարդ և բարձրատեղ), Ազգ. վար-
ժարաններու համար: Կազմեց՝ Վարդան Գեորգեան,
Պէյրուս, 1933, էջ 146, գլխ 8 մր.: — Մասնաւոր
«Ջանակիր» թիւ 15: